

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՃՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՍԱՍՈՒՆԻ ԵՕԹՆԱՄԵԱԿԸ...

Հպարտ, քաջարի, անյողգողդ Սասունը կրկին թըշնամու ոտի տակ է—երկրորդ անգամ 7 տարւայ ընթացքում...

Դեռ չլռեցին հաղարււոր զոհերի հառաչանքները, Դաւորիկի սարալանջերը կարմիրով ներկած՝ դեռ չը մաքրւեցին արեան հետքերից, չը կարողացանք մենք ճշտել դեռ 1894 թւին տւած մեր կորուստների քանակը, չը կարողացանք դեռ պարզել ո՛չ շէնքկցի ուէս Գրգոյի, ո՛չ Գեղիէգուղանի ուէս Աւէի փայլուն պատկերները,—և ահա կրկին ընդհարում, կրկին աւերումներ, կրկին զոհերի ուրականներ Սասունում...

Օգոստոսի 21-ին ռուս-տաճկական սահմանագլխից Pro Armenia-ի և մեր ստացած հեռագիրը, որ արդէն ցրւել է եւրոպական լրագիրներին, գուժեց.

„Մուշի չըջակայքում նոր անգլթութիւններ տեղի ունեցան Աւագակախմբեր համադիէներին եւ կանոնաւոր զօրքերի աջակցութեամբ թալանում եւ սպանում են յուլիսի 3-ից սկսած: Ոչնչացրած են Մառնիկ, Գուրափու, Իկտար (°), Շէխլան, Ծխափու եւ լին Բնակիչները փախչում են լեռները: Վանից եւ Բիթլիսից եկած քիւրդերը եւ զօրքերը գրաւում են Սասունի բարձրութիւնները եւ ուզում են բռնի չինել տալ զօրանոցներ Դաւորիկում, Գեղիէգուղանում եւ Շէխիկում: Ժողովուրդը, սարսափահար, մերժում է եւ իր հայրենիքից հեռանալու համար խնդրում է հիւպատոսների պաշտպանութիւնը: Սօ (°) եւ Դաւորիկը աւերւած են: Բնակիչները ապաստանել են լեռները: Խիանդի աշիրէթը գրաւել է Դաւորիկը“:

Տաճիկ կառավարութիւնը ամենուրեք և անդադրում առաջ է տանում իր օրհասական վճիռը: Չեւերը փոխւում են, բայց էութիւնը մնում է միշտ միևնոյնը: Այնտեղ, ուր նա հաստատւած է արդէն, ջնջում, խեղդում է հայ տարրը անսիրտ և ամենավայրենի հալածանքներով: Մի ուրիշ տեղ, ուր հայը, թշառութեան երկաթէ ճանկերով սղմած, ստիպւած է ամեն ինչ զոհել, քայքայւող պետութիւնն, ինչպէս մի սատկող հրէշ իր օրհասական ցնցումներով ծծում է անզօր կամ յիմար զոհերի արիւնը, քամում է նրանց կենսական ուժերի վերջին մնացորդները՝ իր փող մարմինը կազդուրելու համար: Մի երրորդ տեղ, ուր յարատեւ, կարմիր սարսափի ենթակայ հայը ընդունակ է գլուխը կորցրած ոչխարի պէս՝ թէկուզ անդունդը նետուել, նա

ստիպում է այդ բազմաշարժար վատաբախտին թողնել իր հայրերի ծով արիւնով ու քրտինքով ոռոգւած երկիրը, իր սեփական տուն ու տեղը, իր անթիւ վշտերի ու ցնծութեան վկայ նւիրական յարկը կամ դարերի սրբադրոշմած աւանդութիւնները: Իսկ այնտեղ, ուր հայը իրեն պաշտպանելու դեռ սիրտն ու խելքն ունի, ուր տաճիկը դեռ համոզւած է նրա անբուժելի ստրկահոգութեան մէջ,—այնտեղ նա զօրանոցներ է շինում, որպէսզի ժամանակի ընթացքում՝ ջնջէ հայ տարրի մէջ նրա յոյսերի վերջին նշոյլներն անգամ... Այդպէս վարւեց նա Զէյթունի հետ. այդպէս ուղեց վարւել և Սասունի հետ:

Ու չգիմացաւ Սասունը, աշխատասէր, տոկուն, սակաւապետ, բայց աւանդապահ և իր հացին ու պատւին տէրը միշտ լինել ցանկացող՝ քաջարի Սասունը...

Եւ երբ մենք պատկերացնում ենք այսօր մեծ վտանգի ենթարկւած Սասունը իր ամբողջութեամբ, իր բոլոր հսկայական հասակով և ներքին կորովով մի սոսկալի դառնութիւն է, որ տիրում է մեզ...

Ահա վայրենի Շառախը, այդ հարջ-գողանների երկիրը, իր 15-ի չափ զուտ հայաբնակ գիւղերով, իր հռչակաւոր, անառիկ Գեղիէգուղանով և ամբողջ հովտի վրայ իշխող Անտօք լեռնով: Հայերը այդտեղ սովոր չեն հեշտութեամբ երես դարձնել թշնամուց, բոլոր այդ գիւղերի ուէսները վտանգի ժամանակ սիրով ենթարկւում են Գեղիէգուղանի ուէսին, իսկ Անտօքի դիրքերին դեռ չէ համարձակւել մօտենալ թշնամին...

Ահա ձեզ անմահ Դաւորիկը, Սասունի եռուն սիրտը, իր 20-ի չափ զուտ հայաբնակ գիւղերով իր Մշոյ սուրբ Կարապետի լեռնով, իր „սատանի մազ“ յայտնի կամուրջով, որ միակ և վտանգաւոր անցքն է Մշոյ դաշտից դէպի Դաւորիկի ձորը, և իր կետրօնական նոյնանուն գիւղով: Քրֆր-Քարը նոյնպէս այդտեղ է և՛ ինչպէս հանճարեղ ձեռքերով շինւած մի բերդ, միշտ անսասան, միշտ անմատչելի, հովանաւորում է Դաւորիկը դարերից ի վեր:

Ահա վերին Գաւառը 13 գիւղերում ցրւած, իր արիասիրտ բնակիչներով և բլրեքցի կոչւող քիւրդ մի ցեղով, որ իր ծագումը կրում է Պահլաւունի հայ նախարարներից, իստում է հայերէն աւելի լաւ քան քրդերէն, յարգում է հայկական սրբութիւնները և դեռ երէկ այնչափ մօտ չէր բուն քրդերին, որքան հայե-

րին: Ահա հարաւում Խաղաւքը իր 14 գիւղերով, որոնցից աւելի քան 10-ի բնակիչները զուտ հայեր են, զէնքի սիրահար, թիւրքերից անկախ և կապած նոյն բըլբըլների հետ: Ահա արեւմուտքում Խիանի և Խուլլիի գաւառները իրենց տասնաւոր գիւղերով, որոնցից մի քանիսը ունեն աւելի քան 200 և նոյնիսկ 300 տուն՝ իրենց դպրոցներով, եկեղեցիներով և քահանաներով...

Եւ այդ բոլորի վրայ իշխում է սասունցու ընդհանուր հոյակապ նկարագիրը:

Պապած իր լեռնոտ, անթիւ ժայռերով, ձորերով և կիրճերով ծածկւած երկրի հետ, նա ժայռերի վրայ այգիներ է բուսցրել, քարոտ սարալանջերում բարեբեր արտեր է մշակել, վիթխարի ձորերում հօտեր է աճեցրել, մարգագետիններում մեղր է հաւաքել, նոյնիսկ վայրենի թփերից երկնքի մանանան է ժողովել և ոչ մի ժամանակ չէ քայթակղել ոչ գաղթականութեան, ոչ այլ հոսանքներով: Քաջ և ազատասէր, իրենց ապահովութիւնը և նահապետական խաղաղ կեանքը միմիայն իրենց բազմակների վրայ հիմնած, սասունցիք մինչև վերջերս էլ երիտասարդ թէ հասակաւոր, տոն օրերին՝ խմբերի բաժանւած՝ սովորութիւն ունէին վարժել պատերազմական փորձերում և փոխադարձ յարձակումներում: Զէնքի երկրպագուներ սասունցիք եղել են միշտ, և Գալուստիի Հրդեհից սարը, որ հարուստ է երկաթով, առաջ է բերել բազմաթիւ երկաթգործներ, որոնց ամենասիրելի գործը «շէշխանայ»՝ հրացաններ պատրաստելն է: Ընդհանուր առմամբ զինքին և ազգաբնակչութեան քաջութեան՝ Սասունի հպատակութիւնը տաճկին համարեա միայն անւանական էր մինչ 1885 թիւը, երբ նա խլեց Վանի կուսակալութիւնից և միացրեց նոր սահմանւած Բիթլիսի նահանգին: Որքան անգամ է սասունցին մինչ այդ օրերը դիմադրել հարկերի պահանջին և իր վրայ գնացած զօրքերին իսպառ յետ մղել: Սակայն 1885, նոյնիսկ 1894 թիւից յետոյ էլ Սասունը դեռ չէր մտել կատարեալ վարչական հպատակութեան շրջանը: Ռէսուլ, ընտրւած գաւառակի ազգաբնակչութիւնից — ահա սասունցու միակ իշխանաւորը, նրա վեճերը լուծողը, նրանից հարկ հաւաքողը, նրա ապահովութեան վրայ հոգացողը, վերջապէս թշնամու գէմ նրան դուրս բերողը...

Եւ ահա այս օրհնալ անկիւնն է, որ այժմ Վանից առ Բիթլիսից ժողովւած բազմաթիւ զօրքերով՝ միացրած քիւրդ գիշատիչ ցեղերի և համիդիէների հետ, թիւրք կառավարութիւնը ոտի տակ է տալիս...

Հեշտ է սակայն երեւակայել թէ ի՞նչ սքանչելի ճակատամարտեր, ի՞նչ հերոսական ընդհարումներ, ի՞նչ արբեցուցիչ կռիւներ և երկարատե դիմադրութիւն կարող էր ցոյց տալ այդ քաջարի երկիրը իր հազարաւոր անվեհեր կտրիճներով, եթէ ժամանակին մի փոքր

աւելի սրտով վերաբերէր նրան հայ հասարակութիւնը, հայ բուրժուազիան և նրա ապօրինի զաւակ հայ ինտելիգենցիան՝ օր առաջ լսելով մեր ընդհանուր ազգային պահանջների մարմնացում — անկեղծ և համոզւած հայ յեղափոխականների բարձրաձայն և անդադրում կոչը՝ «զէնք, զէնք հայ ժողովրդին», «կռիւ, կռիւ թշնամու դէմ»: Բայց մեծ է մեր մէջ պատմութիւնից պատահաւոր ճիշտաւոր չարիքը, ահալի է մեր բուրժուազիայի և թրքացած ինտելիգենցիայի ստրկամտութիւնը ու անխղճութիւնը... Վաշխառական բնազդների գարշելի մի թագաւորութիւն է դա, որը զբաղւորից և զոհողութիւնից միայն փախել գիտէ. սպանիչ ցրտութեան մի ամուլ անապատ է դա, որի ցուրտ մթնոլորտում տեղիւնտեղը սառչում են արեան և արտասուքի ամբողջ ծովեր...

Եւ ահա Սասունը փշուրու վրայ է...

Եւ նա կարող է փշուրել: Պայմանները նպաստաւոր են դրա համար: Սասունը դեռ չէ բուժւել 94-ի հարածներէրից — նրա վերքերը դեռ մխում են. Սասունը տեսաւ և սովի շրջան — թշուառութեան սև օրերը այնտեղ դեռ չեն վերացել. սասունցու հետ թիւրքը այսօր թշնամացրել է նրա բարեկամ քրդերին — նրանց հետ հայը հիմա «դինդուլմանի» է. եւրօպական պետութիւնների հովանաւորութեան նշանակութիւնը արատաւորեց հայկական կոտորածներով թիւրք կառավարութիւնը այլևս չէ դողում միջամտութեան ուրաւականից, ինչպէս առաջ կուող հայ տարրը իր հերոսական պայքարի մէջ՝ մենակ է, թողնւած հայութեան ապահով մասերից, դաւաճանւած իր հարազատ եղբայրներից — սրանց մէջ կան նոյնիսկ այնպիսիք, որոնց շատերի անարգ ճակատը արժանի է սուլթան Համիդի գարշելի համբոյրին...

Բայց չկորցնենք մեր սառնասրտութիւնը: Պատմութեան աւերիչ անիւը մեր հայրենիքում շատ շտապ է շարժւում, որպէսզի մենք մի րոպէ անգամ տարւենք վհատեցուցիչ մտածումներով և յետ մնանք կեանքի արագ ընթացքից:

Դեռ ևս մեզ պակասում են Սասունի դէպքերի մասին ճշգրիտ մանրամասներ: Մենք չգիտենք, ինչ վիճակի մէջ է այժմ խնդիրը, ինչ բնաւորութիւն են ընդունել դէպքերը: Զգիտենք նաև, թէ որ աստիճան խորը կը լինի հայկական այս նոր դրամայի պատճառած ցրնցումը դրսի աշխարհում: Սասունը իր առաջին որոտաղաղակով հիմն դրեց Մայիսեան ծրագրին: Արդեօք նրան է վիճակւած և այդ ծրագրի գործադրել տալը, թէ վճռել է նա թէկուզ ոչնչանալ բայց չհաշտւել եւրօպական անտարբերութեան հետ...

Ինչ և լինի, ահա սակայն այն նշանաւոր դասը, որ բոլոր դէպքերում էլ պէտք է տայ մեզ Սասունի և Մշոյ ամբողջ գաշտի ներկայ տագնապը:

Այսօրւայ մուշկ փաստերի հանդէպ՝ հարկւր և

մեկերորդ անգամ մենք պարզեցանք պէտք է տեսնենք այն ճշմարտութիւնը, որ իրերը ունեն իրենց յատուկ օրէնքները և չեն ընթանում ո՛չ «պատրաստողականութեան» չեբբը դեղագիրներով, ո՛չ երկայն ու բարակ, բայց միշտ տխմար ծրագիրներով: Ժողովրդի առողջ մասերը, որոնք մեր «հանդարտակեացներն» պէս չեն խօսում, այլ ապրում են—և ապրում են շատ որոշ պայմաններում—ստիպւած են ճանաչել իրենց խելդող պայմանների բոլոր հոգեհան ծանրութիւնը և գիտեն ինչ անել ու անում են: Ժողովրդից ուրեմն դատապարտւած են յետ մնալու ո՛չ միայն մեր բոլոր «սրտացաւ» փարիսեցիները, անասնացած մեծ ու փոքր բուրժուազիան և բազմաթիւ «խոհմ» ղեկավարները», այլ և նրանք, որոնք, չնայելով իրենց համակրելի «անխոհմութեան», որեւէ պատճառով դանդաղում են տանջող ժողովրդի կողքին գտնել օր առաջ և նրա ցաւերով ապրել: Այո, ժողովուրդը շարունակ կուի մէջ է, ժողովուրդը մեզնից առաջ է, և մենք ենք, որ պիտի հետեւենք նրան, շտապենք նրան օգնութեան հասնել: Վաղէնք ամրապնդել նրա շարքերը և ոչ թէ յանուն այլևայլ ծրագիրների շարունակ պատենք նրա շուրջը՝ բեռնաւորւած նրան սպասեցնել աալու իզուր ցնորքներով: Ապա թէ ոչ օրէօր պիտի կրկնւի միևնոյնը. մինչ մենք կը տատանենք և կը դանդաղենք, ժողովուրդը մի օր այստեղ միւս օր մի ուրիշ տեղ, մղւած թշնամու անդադրում և ըստ ժամանակի ու ձևի աննախատեսանելի հարւածներից, սրտակտուր հառաչանքներով հանգերձ՝ պիտի նետւի թշնամու սրի դէմ, և մենք, «նրա ցաւերով ապրողներ», պիտի մնանք լոկ թշառ հանդիսատեսներ նրա անօրինակ մարտիրոսութիւններին, պիտի ուշանանք նրա բողոքներին միանալու, ինչպէս ուշացան «փեսային» դիմաւորել ուզող «յիմարները»:

Մեզ պակասում են միջոցներ. չէլնանանքով և առանց պաշարի դժար է ժողովրդի համար երկարատե կռիւներ մղելը—այո, այդ ճիշդ է: Բայց նախ՝ տանք այն քիչը, որ կարող ենք և մեզնից է կախւած տալ միևնոյն է, մեզ չեն սպասում ո՛չ թշնամին, ո՛չ ժողովուրդը, և այն, ինչ մենք կը տանք, միայն կաւելացնի երկրի դիմադրական ուժը, հետեւաբար նաև մեր բողոքի նշանակութիւնը: Եւ յետոյ. միթէ մենք—յեղափոխական աշխարհայեացքով ոգևորւած տարրերս, լըւած թշնամու դէմ կուելու անյադ ծարաւով և պատրաստ մեր կուի յաջողութեանը ծառայելու ամէն միջոցներով—քիչ ենք:

Մեր քառակուսի թող լինի մեր ուժը: Օգտւենք այդ ուժից, գործ դնենք դրան առանց յապաղումների, և մեր առաջ չպիտի դիմանայ նաև միջոցների պահանջը...

Մ Ր Ր Կ Ա Յ Ա Ի Ը

(ՄԱՔՍԻՄ ԳՕՐԿԻՆՆ)

Փրփրակոծ ծովուն վրայ հովը ամպեր կը դիզէ: Ամպերուն ու ծովուն միջև մրկահաւը հպարտօրէն կը սաւառնի՝ սև կայծակի մը պէս:

Մերթ իր թւերով ալիքներուն խփելով, մերթ նետի մը պէս դէպի ամպերը սլանալով կը ճէլ ան, — և ամպերը թռչունին յանդուգն աղաղակին մէջ հրճանք կը լսեն:

Այդ ճիւղին մէջ մրկի ծարաւը կայ: Զայրոյթի ուժ, կիրքի բոց, վստահութիւն դէպի յաղթանակը կը լսեն ամպերը այդ աղաղակին մէջ:

Որօրները կը տքան փոթորկին առջև, իրար կանցնին ծովուն վրայ և պատրաստ են անոր յատակին մէջ թաքցնել իրենց սարսափը մրկէն:

Վայրի բազերն ալ կ'ողբաձայնեն: Անոնք — ագ բազերը — անընդունակ են կեանքի կուով գինովնալու: Անոնց սիրտը դող կելլէ ամպերու գոռումէն:

Տխմար վայրի սագը վախվխելով իր գէր մարմինը քարաժայռերուն մէջ կը պահէ: Մինակ խրոխտ մրկահաւը կը թռչի, կը ճախրէ ազատ ու համարձակ՝ փրփրադէզ ծովուն վրայ:

Աւելի ու աւելի մռայլ և աւելի ցած ամպերը կ'իջնեն ծովուն վրայ, և ալիքները կ'երգեն ու կը պարեն դէպի վեր, դէպի որոտկայծակը:

Հանթը կ'որոտայ: Զայրոյթէն փրփրած ալիքները կը մռնչեն՝ քամին հետ մարտնչելով:

Ահա քամին պինդ ուժով մը կը գրկէ ալիքներու խորձեր և վայրենի չարութիւնով մը կը խփէ ժայռերուն՝ զմրուխտէ վիթխարի կոյտերը փշուրփոշի ընելով:

Մրկահաւը կը սաւառնի, ճչելով ինչպէս սեփսև կայծակ մը, սուլէնկի մը պէս կը ճղէ ամպերը և իր թւերով ալիքներուն փրփուրը կը կորզէ:

Ահա կ'անցնի ան դեռ մը պէս — մրկի գոռ, սև դեռ — և կը ծիծաղի ու կը հեկեկայ... Ան կը ծիծաղի ամպերուն վրայ, ան ուրախութեան է, որ կը հեկեկայ:

Ամպրոպի բարկութեան մէջ խորիմաց դեռ շատոնց է յոգնութիւն կը լսէ. ան հաւատացած է, որ ամպերը չպիտի ծածկեն արեւը, — չէ՛, չպիտի ծածկեն:

Քամին կ'ոռնայ... Հանթը կ'որոտայ...

Ծովերու անդունդին վրայ, կապոյտ բոցով մը, ամպերու երամներ կը բռնկին: Ծովը կ'որոտայ կայծակներու սլաքները և իր խորքին մէջ կը մարէ զանոնք: Կայծակներուն արտացոլումները, կրակէ օձերու պէս, կը գալարւին ծովուն մէջ՝ հոն կորսւելով:

Մրկի: Հուտով պիտի պայթի մրրիկը:

*) Մաքսիմ Գօրկին երիտասարդ ողու գրողներու շարքին մէջ ամենափայլուն տաղանդներէն մէկը, իսկ իր ուղղութիւնով անպայման ամենահամակրելի է: Մօտիկ անցեալի մէջ այլեւայլ պատճառներով քանի քանի անգամ բանտարկւած եւ արքայազն է: Վերջերս ալ ողու ուսանողական եւ բանտարկան շարժումներուն արձագանք տւաւ «Մորկիա» (Բուրնվեստիկ) իր այլաբանական գրւածով, որի մէկ մասը միայն կը թարգմանենք: Չնայելով իր հիւանդ դրութեան, Գօրկին կրկին բանտարկեցաւ բարձրագոյն կառավարութեան կողմէ, բայց իր ժողովրդականութեան շնորհիւ եւ համակրողներու միջամտութեամբ բանտէն հանելով, վատառողջ վիճակի մէջ, քննաւ չիւսիսային Կովկաս:

Խիզախ մարկահաւն է, որ հպարտօրէն կը թեապարէ կայծակներուն մէջ, բարկաճայթ ծովուն վրայ. առ յաղթութեան մարգարէն է, որ կը կանչէ.

Թող աւելի ուժգին պայթի փոթորիկը:

«Խ Ե Ղ Ճ Ն Ա Յ ԵՐ»

— Գուք հայ է՞ք:

— Այո՛, հայ եմ:

— Խեղճ հայեր. ձեր հայրենակիցներին, — այսօր կարգացի, — դարձեալ կոտորում են:

— Այո՛, կոտորում են:

— Բայց ինչո՞ւ. ասում են՝ հայերը այնպէս հեղ են, խոնարհ:

— Գուցէ հէնց այն պատճառով, որ հեղ են, խոնարհ...

Եւ երբ դարձրած ձեր երեսը խօսակցից՝ քայլում էք մտամոլոր, վերաւոր, լսում էք՝ ինչպէս բոլոր բերանները կրկնում են՝

«Խեղճ հայեր, խեղճ հայեր...»

«Խեղճ հայեր»...

Ահա թէ ինչ վաստակեցինք մեր 300 հազար զոհերով, արեան այն գետերով, որոնք ինչպէս գարնան հեղեղ, ողողեցին Երկրի ձորերն ու դաշտերը, նահատակների այն լէգէօններով, որոնք մորթեցին առանց բողոքի, աղերսանքը շրթունքներին եւ թաղանթի դիմաց, սարուկի վախը ճակատին...

«Խեղճ հայեր»:

Ահա մեր վաստակը՝ շնորհիւ ոչխարամիտ «քաղաքագիտութեան», որ 25 տարւայ աղերսանքներից և 8-ամեայ կոտորածներից յետոյ, փոխանակ վրէժ գողացելու, գերբնական ճիգեր է թափում մորթեալ հայերի զաւակներին և առեանգւած քոյրերի եղբայրներին թմբեցնող օրօր կարգալու, վարժեցնելու նրանց ստրկական հնազանդութեան, բղխած հայի գրչի ծայրից, պաշտօնական բարեմաղթութիւնների, դրած պատրիարքների բերանում, և խոհեմ համբերութեան, աւանգւած յուսահատ ժողովրդին...

Յիրաւի՝

«Խեղճ հայեր, խեղճ հայեր»...

Հայկական բարձրամակերների ազատագրական հովերով սնած հերոսները, թէեւ, ճշմարիտ է, փոքրամիտ, թէեւ սահմանափակ, չ'անցան, աւաղ, ժողովրդական ոգեւորութեան աշխարհը և ոչ էլ օտար աշխարհներ: Մենք հերոսներ ունեցանք, այո՛. բայց կախաղանի բարձրութիւնից «ազատութիւն» գոչող, կուրծքը ժայռի նման թշնամուն տուող, ժպիտը շրթունքներին ուժով նետող հերոսը ժողովրդական յոյզերի աղբիւր չգարձաւ. նրան չճանաչեց ամբոխի աշուղը, օգայի հեքիաթաբանը. երգիչը նրան չ'անմահացրեց, պատանին նրա պատկերով իր սեղանը չգարդարեց. զմայլանքի, կուսական յոյզերի առարկայ չ'եղաւ նա հայ օրիորդի համար և ոչ խենթացնող օրինակ՝ հայ երիտասարդին: Մնաց միշտ կիսածանօթ, անժողովրդական, սեփական միայն փոքրամիտ երազողներին...

Խոստովանենք այդ:

Եւ գուցէ դա է պատճառը, որ հերոսական գործերի ալիքը հասաւ Եւրոպա, չջաջիեց ականջը օտար ազգերի, ուր «Հայաստան» դարձաւ համանիշ «կոտորածի» և ուր «հայը» չի արտասանում առանց «խեղճ»-ի, առանց մուրացկանին վայել կսկծալից բացականչութեան...

Ամօթ մեզ:

Ստրուկ ենք: Ստրուկ հայրենիքում, ստրուկ օտար երկրներում: Եւ դրօշմած իր ճակատին ստրկութեան կնիքը, հայը պտտում է երկրից երկիր, ցամաքից ցամաք իբրեւ ճանապարհորդ, ուսանող, վաճառական, արտորական, միշտ այդ անունը վրան: Այս նոր դարում մենք միակն ենք, միակ ստրուկ ազգը՝ մահմեդական բռնապետութեան առաջ: Ուրիշը չկայ: Եւ չենք էլ զգում, որ մենք ախտ ենք ազատութեան համար, ինչպէս ժառանգաւոր՝ առողջութեան համար, Ստրուկ բռնութեան թագաւորութեան մէջ, ստրուկ և՛ ազատութեան երկիրներում: Եւ այդ անզգայ երջանկութեան մէջ յաճախ երջանիկ ենք, յամօթ հայութեան, երջանիկ, այո՛, որ մեզ խղճում են, որ մեզ կարեկցում, մեզ մեղքանում են... Ազատութիւնը միշտ է կարեկցել ստրուկին: Դա մեր առաքինութիւնը չէ, այլ մեր ամօթը. մեր պարծանքը չէ, այլ մեր անկարութիւնը...

Եւ ինչո՞վ, ինչո՞ համար պարծենանք:

Տե՛նք հայը իր բազուկը, փողը, իր համակրութիւնը, և Երկիրը չփրկեց:— Երբեք: Լաւագոյն օրերին՝ կարող հայը միայն իր նիսիա համակրութիւնը տւեց, իսկ անաջող տարիներին՝ իր տրտունջը, դժգոհութիւնը, նոյն իսկ անէծքը: Սասունցու արիւնը, վանեցու վերքերը, ուրֆացու դիակները՝ կովկասեցի հայի կամ եւրօպական գաղութների «անձնւորութեան» ապացոյցը չէ: Բէֆօրմների կարօտ վեց նահանգները արիւն տւեցին: Ի՞նչ տւեցին այդ դժբախտ վայրերից հեռու միլիօնատէր հայերը, որոնց արիւնատարաբերակների ապահովութիւնը աներկբայ է, աներկիւղ:

Աղքատ, դատարկ թիւրքական գանձարանը փողով ապստամբ քրդերից գնդեր կազմեց, փողով զօրանողներ կանգնեց Այգեւստանի կրծքում, Զէյթունի գագաթի վրայ, Տալուրիկի լանջերում, իսկ հարուստ, միլիօնատէր, դրամով զօրեղ հայը չի՞ կարող, ո՛չ, չի ուզում, չի էլ մտածում նոյն փողով զէնք տալ կուռղին, հաջ՝ հայդուկին, գրիչ՝ պրօպագանդիստին:

Եթէ մի օր, մի դժբախտ օր, Եւրոպան ասէր. «Պատասխանեցէ՛ք մեզ, դուք, ո՞վ հայ գրողներ, հայ հեւտորներ, եւրօպացու դռները մաշող հայ պրօպագանդիստներ. քանի՞ միլիօն են դրել ազատութեան գործի համար ձեր հայրենակիցները, և քանի՞ հոգի են զոհւել ձեր հայրենիքի դաշտերում այն երիտասարդներից, որոնք մեր համալսարանական ամբիոններից ազատութեան դասեր են առած»,—

Ի՞նչ պատասխանենք, հայեր: Կամ կարծում էք միթէ՞, որ մեր ամօթահայր կարմրութիւնը կը փրկի ձեր պատիւը...

Դեռ 20 տարի առաջ Եւրոպան մեզ ասաց. «Արիւն թափեցէ՛ք»: Արիւնը թափեց, յորդառատ, անվերջ: Սակայն դա այն արիւնը չէ, Դա բռնապետութեան սնունդն էր, նրա ուզածը, նրա կենդանութեան աղբիւրը: Արդարութեան գործը մնաց կիսակատար: Բռնաւորը

արին չտեսցի: Աշխարհ դեռ չտեսաւ մեր հարաւոր արդիւնքը, մեր վրէժի պտուղը: Սուլթանը շարունակում է պառկել իր փափուկ անկողնում: Զէքի փաշան նոր աստիճաններ է ստանում: Բահրին՝ անպատիժ մնացած՝ պատրաստ է վերսկսելու նոր կոտորածներ: Անմեղների արեան դիմաց՝ ոճրագործ ու թիւնը մնաց անպատիժ: Վրէժի տեղ՝ հնչում է լացը: Անձնւթուրութեան տեղ՝ փշրանք, — փշրանք փողի, փշրանք ոգևորութեան, փշրանք վրէժի...

«Փշրանքը» հիացմունք, յարգանք չյարուցեց, այլ միայն կարեկցութիւն, ցաւ: Եւ եւրօպան մնաց ցնցած ոչ թէ հայկական հերոսութիւնն երբ ընկճող նկարագրով, այլ արեան, կոտորածների, մորթւելու գթաբեր լուրերով...

«Խեղճ հայեր»...

«Ի ե ց ց է՝ հ ա յ ր»... կը գոչեն բերաւոր շրթունքներ, ծափերի թնդիւնով, երբ դարերի շաքերի միջից իր տոկունութեամբ յաղթական հայը, փոխանակ մորթւելու ինչպէս ստրուկ, ինչպէս երկչու արարած, կը ցցւի թշնամու հանդէպ իբրեւ ազատութեան զինուոր, պատրաստ զոհելու ամէն ինչ, ընդունակ հարաւորին հարած տալու: Մեր կուրի փոքրածիւ, բայց գիւցադնական դիպածները՝ դրա առհասարակ են:

Բայց եթէ մենք կը շարունակենք, հանգիստ խղճով անխռով դէմքով, պտտել աշխարհից աշխարհ, ստրկութեան կնիքը մեր ճակատին, աղերսանք բերանին, իբրեւ զաւակներ շղթայակապ հայրենիքի, երջանիկ, որ օտարը մեզ կարեկցում, խղճում, ցաւակցում է, այն ժամանակ երկրից երկիր, սերունդից սերունդ, գրբից գիրք կը մնայ և կը հնչի Մուրացկին արժանի մի խօսք միայն՝

«Խեղճ հայեր», «Խեղճ հայեր»...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՎԵՐՋԻՆ ԴԵՊԲԵՐԸ

Օգոստոսի 21-ի հեռագրից յետոյ մեր ստացած նամակներից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները Սասունում և Մուշում տեղի ունեցած անցքերի մասին:

ՍԱՍՈՒՆ

4 յուլիս

Բաղէշի կուսակալն ու Ալայի պէյը Բ. Դրան հրահանգներով դեռ տեղս, Մուշ են: Երբեմն Սասնոյ և երբեմն Դաշտի վրայ կը դարձնեն իրենց ուշադրութիւնը ու հարստահարութիւնները: Սասունի բոլոր լեռներու վրայ քիւրդ աշիրէթներ իրենց վրանները հաստատած են: Վանէն, Բաղէշէն զօրքեր եկան: Սասունցիները իրենց դիրքերէն իջեցնելու ծրագրի մը համաձայն, 500-է աւելի կանոնաւոր զօրքով վարպետներ զրկւեցան Սասուն՝ որոշեալ երեք կէտերու վրայ (Շէնիկ, Գելիէգուզան և Տալուրիկ) զօրանոցներ շինելու համար:

Սասունցիին նկատելով, որ կառավարութիւնը հոգ մուտ գործելով, անձայն ու անձուն զիրենք խեղդելու և ուշիկ-ուշիկ ջնջելու նպատակ ունի, վերջապէս որոշեց միանգամից կոտորելի սրէ անցնիլ և չթողնել որ այդ ծրագիրը իրականանայ: Հանրագիր մը կնքելով և կանանց միջոցով

խրկեցին Մուշ կուսակալին, Գրելով որ — «Եթէ կուզէք մեզ մեր հողին վրայէն գաղթեցնել, բերել տէք մեզի մի քանի օտար հիւպատոսներ, որոնց հովանաւորութեան ներքեւ հեռանանք ձեր հողէն: Իսկ եթէ կը ցանկաք զօրանոցներ շինել և մեզ թողնել մեր տեղւոյ վրայ, չենք կրնար ընդունիլ, որովհետեւ մեր աշխատող ձեռքերը մեր կանայք ու աղջիկներ լինելով՝ գիշեր ու ցորեկ դուրսն են, կ'անպատին զօրաց կողմէ, և չենք կրնար տանիլ: Վերջապէս այդպիսի ձեռնարկ մը սկսելուն պէս կը կոտորւինք կին ու երեխայով: Երբ ամայացան մեր բնակավայրերը, այն ատեն ինչ կուզէք, զայն ըրէք»:

Կառավարութիւնը կարծես կասեցաւ այդ պատասխանի առջև: Բայց ահա շատ չանցնիր, զօրքերի հետ միասին վարպետներ կը խրկին Սասուն՝ յիշեալ զօրանոցներու շինութիւնը սկսելու: Սասունցի կանայք՝ յարձակելով՝ կը շարունակեն վարպետներու գործիքները և կը սպառնան: Վարպետները կը փախչին ու Մուշ կը վերագառնան:

Մ Ո Ւ Շ

10 յուլիս

Տաճիկ կառավարութեան և իսլամ տարրին վերջին վճռագիրն է՝ կոտորել Մուշ և Սասուն... Ինչու... — Որովհետեւ Մշոյ և շրջակայքի հայ տարրը աչքի զարնող թիւ մը կը կազմէ, որովհետեւ 95-ի գազանային կոտորածին Մուշը համեմատաբար նւազ ջարդ ու քննա կրեց, որովհետեւ Մշոյ և Սասնոյ մէջ երբեմն յեղափոխական շարժումներ ու խլրտումներ կերկին:

Կուրավ ու գիւղի յունիս 25-ի ընդհարման առթիւ թէ և նախապէս համառօտիւ գրւած է, բայց ահա մանրամասնութիւնները: Մեր անմոռանալի հայդուկներէն ՍԵՂԻՍԿ և ՍԱՐՕՆ — բառի բուն նշանակութեամբ ազնիւ, հայրենիքի ազատութեան գործին նիրաւած անկեղծ երիտասարդներ — կը գտնւէին Կուրավու գիւղ՝ Առաքելի տան մէջ: Ալայի պէյը դաւաճան Մակարի մատնութեան վրայ հիմնւած՝ ցերեկին մօտ 100 ձիաւորներով կը պաշարէ Կուրավու գիւղը: Կը հասնին չաչաններու և քրդերու մեծ բազմութիւն մ'աւ կըսկսին գիւղը խուզարկել, աւելի ճիշդը թալանել: Կարգը կը հասնի Առաքելի տան: Մեր հայդուկները պատրաստ կըսպասեն: Երբ դուռը կը բացուի, կը գոռան. — «Քեզայի անունը լսած չէք. ձաքայ բացէք»: Ամբոխը երկու մասի կը բաժնուի, և մեր հերոսները դուրս կը թռչնին: Սերգայը շատ անգամ պատահեր է այսպիսի դժբախտ արկածներու և ընդհարումներու և միշտ ցոյց է տուել անձնւթուրութեան աննման օրինակներ: Վերջապէս այսօր նա կուգայ երկար տարիներու իր աշխատութեան պսակն հիւսելու: Թշնամու կողմէն գետին կը փռւին երկու ոստիկան — ԵՆՍՈՒՖ ԶԱՆՈՂՆ և ՔԵԳՈՒՂԱՏ (Բթօ մականւանեալ) — և երկու ուրիշ ալ ծանր վիրաւոր:

Մեր ընկերները կիյնան դուրան դաշտի մէջ—ոչ դիրք, ոչ ապաստանարան: Կոյր քախտը հոս ալ իր դերը կը խաղայ—կ'աւրւի Սեդրակի մօտինը. . . Կատաղութեամբ մը գետին կը զարնէ ու կը պոռայ. — «Ահա հրացանիս կտորները. հարկւրաւորներ էք, մի՛ վախճաք, եկէ՛ք, սպանեցէք»: Կը քաջալերւին վատերը, և գնդակները կարկտի նման կը տեղան: Մեր հերոսը՝ գոհ սրտով, ժպտալ երեսին, կիյնայ, իսկ Սարոն, այդ թարմ երիտասարդը, առիւծի պէս կուելով՝ կը հասնի Եփրատի եզերքը ու հոն կիյնայ՝ իր արիւնով ներկելով Մուրատ գետի պղտոր ջուրը: Գիւղը կը ցրւի. Առաքելի տունը կը վառեն, և դեռ այսքանով իրենց վայրենի կիրքը չի յագենար. կըսպանեն 3 գիւղացի խեղճ հայեր, որոնց դիակներն ալ, իբրեւ ֆէդայիի, մեր հերոսների դիակների հետ Մուշ բերելով, կը թաղեն անմահ Գուրգէնի կողքին: Յարգանք անոնց յիշատակին, համբոյր անոնց պաղ հողերուն. . .

Մշոյ Արտերդ գիւղացի Հմառն և Միսակ անուն երիտասարդներ, զէնքի ծարաւէն բռնւած, մի ուրիշ ախճանցի երիտասարդի հետ չաջաններու և քրդերու մօտ ծառայութեան մտնելով, կը գողնան երեք կանոնաւոր զէնքեր ու կը փախչին: Յուլիս ամսոյ 3-ին կը վերադառնան դէպի գիւղ ու խոտի դէզի մը տակ կը քնանան: Ախճանցի երիտասարդը հաց բերելու համար կերթայ գիւղ. հոն հասնելուն պէս՝ կը ձերբակալուի ոստիկաններէ ու քրդերէ: Գնդակով տղան վիրաւորելէն ետքը՝ կըսկսին ծեծել չարաչար: Տեսնելով որ պիտի սպաննեն զինքը, տղան կ'ըսէ. «Մի՛ սպաննէք զիս. ցոյց կուտամ՝ ձեզ ֆէդայիներ, և եթէ ինձ Մուշ տանիք, շատ մը գաղտնիքներ կը յայտնեմ»: Ապա ցոյց կուտայ իր երկու ընկերները: Մարդակեր գազանի ուխտաւ ծառաները՝ հասնելով խոտի դէզի մօտ, խոր քնոյ մէջ կըսպաննեն երկու երիտասարդներն ալ առանց ձայն տալու, առանց խղճահարելու: Ախճանցի երիտասարդը, երբ բերին Մուշ, հարցաքննութեան միջոցին յայտնեց. «Ես ոչինչ չգիտեմ, միայն կեանքս ազատելու համար այդպէս խօսեցայ»: Կը մնայ բանտը:

Ստեղծւած է անանկ գրութիւն մը, որ իսլամները արդէն իրենց համար ընադօր իրաւունք կը համարին ամէն պատահող հային սպաննել ու անցնիլ: Այնպիսի ընդհանուր սարսափ մը կը տիրէ, որ հայ գիւղացին չի համարձակիր դաշտ իջնել. հունձը հասած է, երկրագործի կենաց ու մահւան օրն է, բայց նա բանտարկւած է իր տան մէջ:

Յունիս 23 Ալի Գւլուռն գիւղացի Ասատուրը կը սպանուի Դեղձմերցի քրդերէ առանց պատճառի: Յունիս 23 տափիցի հայ մը Մշոյ Կրէ կամուրջ ըսւած տեղը զօրքերէ սուինով կը վիրաւորուի՝ կողոպտելու նպատակով: Յունիս 27 Մշոյ 2 օրը 2 լիթոյի Օփոյի տղան դաշտնով կը վիրաւորուի թիւրքերէ: Յուլիս 4 Յրօնք գիւղ հունձքի մէջ Ալոյի Յակօն կըսպանուի. եղբայրն ալ մահամերձ կը վիրաւորուի: Յուլիս 4 Հաւատօրիկ գիւղ երթալով՝ խումբ մը բազրանցի քրդեր կը մտնեն տուն մը, ուր մայր մը իր երկու զաւակներով կը գտնուի: Խեղճ կինը, գատայ (եղով հաց) և կերակուր պատրաստելով կը հիւրասիրէ երկուղէն: Սակայն հեռանալու ժամանակ կըսպաննեն մայրն իր երկու զաւակաց հետ միասին: Որպիսի՞ քսամենի արարք. . . Տեսէք, բուն վայրենիները ուր կը բնակին:

Յուլիս 5 Զբաղանքի կոտորածներու և անմահ Սերոբի սպանութեան պարագային մեծ դեր խաղացած և պատանշաններու արժանացած Խալիլ աղայի փառաւոր պատիճէն ետքը, անոր եղբօրորդին Պրահիմը, սասունցի և բազրանցի քրդերու ընկերակցութեամբ, յարձակելով հայ Մահմէդի գիւղի վրայ, կըսպաննեն 6 հայեր, 3 ալ ծանր կը վիրաւորեն ու գիւղը կը կողոպտեն: Գիւղացիք ցիրուցան եղած ու կորսուած են. թերեւ շատերն ալ սպաննւած: Յունիս 22 Խաւաքու գիւղէն 16 տաւար աւար տարւեցաւ յայտնի աւազակապետ Սէյդի կողմէ: Յունիս 22 Խոշկէլտի (Պուլանք) հայ գիւղէն ամբողջ նախիրը աւարի առնւած է: Մանազկերտի Տէրըք գիւղի նախիրը (150 հատ) հասնանցի աշիրէթի ցեղապետ Ռզախը կը տանի: Յուլիս 8 Մշոյ Փեթար գիւղէն 150 ոչխար աւարի առնւած է բազրանցիներէ: Յուլիս 6 Մշոյ Շէխլան գիւղէն 200 ոչխար տարւեցաւ պատուկանցիներէ:

Ժողովրդական տգրուկ մշցի յայտնի ճիզայիր աղա թիւրքը, որ կը բնակի Մշոյ Աւազաղբիւր գիւղ բացարձակ բռնութեամբ տիրացած է Ղզլաղաձ, Սընձնուտ, Աւազաղբիւր և ըն գիւղերու վրայ: Սա իր ծառաներով մտնելով պատըքանցի աշիրէթի մէջ, ժողովներ, խորհրդակցութիւններ կը կատարէ, հրահանգելով թէ յարմար առիթ է. «Իջէ՛ք և Դաշտի գիւղերը աւերակ դարձուցէ՛ք»: Պատըքանցի աշիրէթէն Գառանց Ալօ անուն քիւրդը—որ 95-ի կոտորածին յայտնի դեր խաղացած էր՝ աւերակ դարձնելով Մակաբայեցոց վանքը և կոտորելով հոն գտնուող 4-5 հարկուէ աւելի հայեր, երիտասարդ, ծեր, կին, աղջիկ, պատանի և երեխայ,—միացած ճէզայիր աղայի ծառայ Խուշիի հետ՝ քրդական խառնիճաղանձ բազմութեամբ մը կը յարձակին Ս. Յովհաննու վանքի սեփականութիւնը եղող Տատրոգոմ հայ գիւղի վրայ, ուր կը կը բնակին 10. 15 տուն աղքատիկ հայեր, և կը կողոպտեն ու կ'աւերեն ամէն ինչ: Գիշերը հոգ անցնելով՝ առաւօտեան կը պաշարեն Ս. Յովհաննու վանքը: Վանականները՝ դռները փակելով՝ կ'ամրանան վանքին մէջ: Քրդերը կ'առաջարկեն դուռը բանալ՝ ըսելով թէ «Մենք վանքը կողոպտելու համար եկած չենք, այլ խուզարկութիւններ կատարելու և ֆէդայիներ գտնելու»: Վանքի տեսուչ և այժմու վանահօր փոխանորդ Հիզնի Մկրտիչ վարդապետը կը պատասխանէ. «Ձեզի չեմ կրնար դուռը բանալ: Ահա լուր զրկեր եմ կառավարութեան. եթէ խուզարկելու կամ կոտորելու պէտք կայ, թող գայ կառավարական զօրքը և կատարէ»: Այս պատասխանին առջև, կարծես, քիչ մը կը շարին: Դեռ քրդերը հեռացած չէին վանքէն, երբ վանքի կողմէ կառավարութեան լուր տուող անձնաւորութիւնը կը վերադառնայ: Ահա ինչ է եղեր կառավարութեան պատասխանը. «Այժմս պատրաստի զօրք կամ ոստիկան չկայ, և մենք գիտենք, որ քրդերը ալ դապիսի ձեռնարկ մը չեն ընենք»:

Այլևս ինչո՞ւ չկոտորել ինչո՞ւ չսպաննել ու չոչնչացնել ո՞վ է հարցնողը կամ ո՞վ է պատասխանատուն: Քրդերը կ'իջնեն Ղզլաղաձ: Նոր համախրուածներ կը լինին հոն: Տեսնենք՝ թէ Ղզլաղաձի տրաման ինչպէս կը խաղցի:

Աւազաղբիւր գիւղացի Համբար անուն հայ մը գութան քշելու ժամանակ գիշերով կըսպանուի: Սպաննող

ները յայտնի չեն։ Այս Համբարձեղային աղայի ծառան էր։ Սպանութիւնը հայ յեղափոխականների կը վերագրեն։ Սէյթանցի աշխրեթէն Դաշէի Մոզիկ անուն քիւրդը սպանեց Յ ր օ ն ք գիւղի ուէս Արթինը։ Փ ո ղ ա Ր Կ ո Վ գիւղի ուէս Սաշոյի ոչխարները թալանեցին։ Այս պահուստի հօտերն ալ քշած են։ Տ ա տ Ր ո գ ո մ գիւղացի Մըլքէ անուն հայի ոչխարներու մէջ դրացի քըրդերը մանելով՝ օր կէսօրին հանածները կ'ընտրեն և կը տանին։

Աւարառութեանց, հարստահարութեանց միառմի նկարագրութիւնը կատարել մեզ անկախելի է։ Չըգիտենք, թէ ի՞նչեր կը կատարէին Մշոյ դաշտի սահմանի վրայ գըտնուող գիւղեր ու շրջակայ գաւառներու մէջ։ Անոնց դժոխային կեանքն էլ թող երկնից կամարի վրայ նկարէի...

Ապահար քաջ յայտնի է, որ ամէն հայ «մահ, մահ» կը կանչէ, բայց կարծես մահն ալ սարսափահար երբեմն հեռու կը փախչի. կարծես, նա ալ չուզեր հայերիս կենաց թելը մի անգամէն կտրել, որպէսզի քամենք թշառութեան բաժակի մրուրը, որպէսզի պատմութեան մէջ ապագայ մարդկութեան թողնենք հրէշային և հետաքրքիր նկարագիրներ...

ՏԵՐՐԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՈՒՇՈՒՄ

7 յուլիս

Մշոյ արդէն իսկ անտանելի վիճակը կրկին ծանրացաւ։ Կառավարութիւնը ջանք չի խնայիր մեր բնաջնջումը օր առաջ տնելու։ Քրդերու վոհմաններ ազատ համարձակ իրենց սուրը կը շարժեն Դաշտին մէկ ծայրէն միւսը։ Վերջին քանի մը օրերու մէջ պատահած սպանութիւններու թիւը 30-ի կը հասնի։ Խառնակի մէջ սպանած են 3 հոգի՝ Պետրոս Սահակեան, Կարօ Մալարեան և Ամպօ Յովսոյեան։ Մոկունք գիւղէն 8 հոգի, Հացիկ գիւղէն 11, Ավարինձ գիւղէն 3, Շմլակէն 1։

Այս դժոխային կացութեան մէջ ունինք սակայն միութարութիւն մը, որ մեզ վերջնական լքումէ ու բարոյական մահացումէ կը փրկէ։ Թշնամին որչափ ամուր կը սեղմէ իր շարքերը մեր շուրջը, մենք ալ այնչափ սերտ կերպով իրարու կը մերձենանք և ընդհանուր ահաբեկի վտանգը փոխադարձ կարեկցութեան ու օգնութեան բնազդները կ'արթնցնէ հայ ժողովրդին մէջ։ Ինչ որ տարիներու ջանքերն ու քարոզութիւնները չէին յաջողած ընել, անխելք կառավարութիւնը կ'ընէ մէկ հարածով՝ շնորհիւ իր ծայրայեղ խստութիւններուն։ Կեանքը ալ իր արժէքը կորսնցուց հայուն համար, իսկ բանտ, տանջանք ու կախաղան առաջան վախին տեղ՝ դառն քմծիծաղ մը միայն կը ձևեն իր շրթունքներուն վրայ։

Անմահ Սերոբի մահէն յետոյ՝ պահ մը ոգևորութիւնը տիրեց թիւրքերուն ու քրդերուն մէջ, որոնք կը հաւտային անգուգական հերոսին հետ մէկտեղ թաղած ըլլալ ամբողջ յեղափոխութիւնը։ Սակայն գէպքերը չ'ուշացան ապացուցանելու որ չարաչար սխալած էին։ Սերոբի և Սպաղանքի դահիճ Պըշարի խալիլ աղան տապալելէ ետքը, յեղափոխականի գնդաւ կը հասաւ նաև Բօթանեանց Ը է Ր Ի Փ ա ղ ա յ Ի ն, որ երկար տարիներէ իվեր ճշմարիտ Ազրայէլ մը դարձած էր Մշոյ դաշտի հայ գիւղերու գլխուն։ Ասոր սպանումը պատրակ բռնելով, կառավարութիւնը 95 հոգի բանտարկեց Մոկունք գիւղէն։

Սպանւած աղային եղբայրները Նիազի և Ռէշիտ, Առաղ գիւղի դաշտին մէջ չորս հայերու հանդիպելով, չորսն ալ մարթինի գնդակներով սպանեցին։ Սպանւածներն են՝ Կուլնի Սրգօն, Ֆարխոյի Մովսէս, իր եղբայրը Սեդրակ և Մշու քաղաքացի Մարտիրոս Պետրոսեան։

Իրենց կատաղութիւնը անմեղ գիւղացիներու վրայ ալ չկրնալով յագեցնել, թիւրքերը ընդհանառակը համոզւեցան, որ խնդիրը նուր կերպարանք պիտի առնէ հետագայէ, և տագնապի մատնւած՝ սկսան աւելի արմատական միջոցներ փնտռել պոռթկացող վրէժխնդրութիւնը խեղդելու համար։

Այս նպատակով տեղիս միւլթեսարիֆը արտակարգ ժողով մը գումարեց, ուր հրաւիրած էր թիւրք և քիւրդ բոլոր հզօր չարագործները։ Այդ ժողովին հերոսը կը հանդիսանայ պալաքցի աշխրեթի ցեղապետ հաճը Ֆ է Ր օ ա ղ ա ն, որու ուղեղին մէջ սակայն բարբարոս բնազդները շատ քիչ տեղ էին թողած խելքին։ Այս ցեղապետը զօր տալով իր ամբողջ վայրենի պերճախօսութեան՝ ժողովականներուն կը յայտնէ՝ թէ հայերու անհանգարտութեան միակ պատճառը կառավարութեան անոնց հանդէպ մեղմ ընթացք բռնելն է։ Եւ լիազօրութիւն կը պահանջէ բոլոր հայ գիւղերը տակն ու վրայ ընելու, խոստանալով կարճ միջոցի մը մէջ Ֆէդայիներու անունն իսկ ջնջել։ Միւլթեսարիֆը քիւրդ պէյին այս կտրուկ առաջարկին իր կատարեալ համաձայնութիւնը յայտնելով հանդերձ, կը պատասխանէ թէ՝ այդ տեսակ լիազօրութիւն մը տալը իր իրաւասութեանէն վեր է և պէտք է Պիթլիսի կուսակալին դիմել։

Ասոր վրայ հաճը Ֆէրօն զինուորներու և ոստիկաններու ջոկատով մը ծամբայ կ'իյնայ Պիթլիս։ Սակայն յիմար քիւրդը մտքէն իսկ չէր անցնէր՝ թէ իր վրայ հսկող աչքեր կան։ Մուշէն 8 ժամ հեռու Ռափա կոչւած տեղը յանկարծ խուճ մը մը Ֆէդայիներէ կը պաշարուի և առանց դիմադրութեան ժամանակ ունենալու՝ անձնատուր կը ըլլայ։ Ֆէդայիները ամբողջ խուճը գիւն ա թ ա փ կ'ը ն են, կը ս պ ա ն ն են ու կ'ա ն յ ա յ տ ա ն ան։

Այս դէպքը բոլորովին ապշեցուց կառավարութիւնը, որ կը տեսնէր թէ մութին մէջ ծրագրած իր դաւերն իսկ կ'իմանան հայ յիօմիտէճիները։

Եւ սակայն աւելի ապշեցուցիչ անակնկալ մըն ալ վերապահած էր իրեն։

Վերոյիշեալ տեւորին տպաւորութիւնը դեռ չպաղարծ՝ Ֆէդայիներու ձեռքով ս պ ա ն ն ւ ե ց աւ Մշոյ հայութեան էն կատաղի դահիճներէն մէկը՝ Խ ա լ Ի լ է Փ է ն տ Ի ն։ Այս ճիւղը, որ տարիներէ իվեր քաղաքապետի (պէլէտիյէ ըէիսի) պաշտօնը կը վարէր, աներևակայելի ծայրայեղութեան մը հասցուցած էր իր հալածանքները Տարօնի հայութեան դէմ։ Խալիլ էֆէնտիի սպանութեան աւետիսը լսելուն, Մշոյ ամբողջ հայութիւնը մէկ բերան օրհնեց Ֆէդայիին պատուհասող բաղուկը. իսկ մահմեդական ամբօին ու կառավարութիւնը սարսափէն խելակորոյս՝ նոր ոճիրներու շարք մը վերսկսան։ Գիւղերու մէջ տասնեակ մը խեղճեր սպաննւեցան և Մշոյ բանտերը այս պահուստի ինչ են հարիւրաւոր հայ բանտարկեալներով։

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀԱՅ-ՄԱԿԵՏՈՆԱԿԱՆ ՀԱՅԳԻՈՒԿԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ ՄԸ ԿՈՒԻԸ

(ՆԱՄԱԿ ԸՏԻՐՆԷՆ)

Ամսոյ Ե-ին Հայ-բուլղար յեղափոխական խումբ մը յարձակում գործեց քաղաքէս քաւորդ ժամ հեռու գտնուող Տէրտլի Մուսթաֆա պէյի ագարակին վրայ Խումբը, որ նպատակ ունեցած է Էտիւրէյի վալին գերի քռնել՝ լուր առած էր որ վալին նոյն օրը խնջոյքի հրաւիրւած էր յիշեալ ագարակին մէջ:

Այս յանդուգն ձեռնարկին այլեայլ մեկնութիւններ կուտան, բայց հրոսախումբին գլխաւոր նպատակներէն մին եղած է՝ միւշիր-վալին գերի բռնելով, թիւրք կառավարութենէն իբր փրկանք պահանջել հայ և մակեդոնացի քանի մը բանտարկեալներու արձակումը:

Դժբախտաբար խումբը կէս ժամ ուշ հասնելով՝ վալին արդէն քաղաք վերադարձած կը լինի: Յեղափոխականները կը ձերբակալեն ագարակատէր պէյի որդին և կուզեն լնդները հեռանալ, բայց անմիջապէս յարձակման մը կենթարկին: Սակայն՝ սպանելով 3-4 ոստիկան, մէկ միւլազիմ, քանի մը զինուորներ և 15 ձի, որոնց ետեւը պատսպարւած կը կուին եղեր զինուորները, խումբը յառաջ կ'ընթանայ առանց զոհ մը տալու: Կառավարութիւնը իմանալով եղելութիւնը, անմիջապէս բազմաթիւ հեծեալ ու հետեակ զինուորներ և մինչև իսկ երկու թնդանթ կը հանէ՝ խումբը ամբողջովին ձերբակալելու համար:

Ընդհարումը տեղի կ'ունենայ սահմանագիծէն 2 1/2 քիլոմետր հեռու, քարքարուտ տեղ մը: Բոլոր անցքերն ու ճանապարհները արդէն բռնւած լինելով՝ յեղափոխականներուն ուրիշ բան չի մնար ընել, բայց եթէ կատաղի դիմադրութիւն մը: Մինչև իրենց փամփուշտներուն սպառումը մոլեգնաբար կը կուին հարիւրապատիկ աւելի սոււար զօրքին դէմ:

Կուր կըսկսի առաւօտեան ժամը 7 1/2-ին և ամբողջ չորս ժամ կը տևէ:

Ամէնէն առաջ կ'իյնայ յայտնի բուլղար յեղափոխական Սօհրօվը, բարձրահասակ, յաղթանդամ երիտասարդ մը: Ասոր հետ կըսպանին հայերէն Անտօն, Թէքիրտաղի Օննիկը և Իվան անունով բուլղար մը: Բուլղարահայերէն շատերուն ծանօթ դիւցազն՝ Թաթուլը իր ընկեր Գէորգին հետ քիչ մը հեռուն առանձին դիմք կը բռնեն, խումբին թիկունքը պաշտպանելու համար: Թշնամին, որ յոյս ունէր այդ կէտէն յառաջանալով նեղ օղակի մը մէջ առնել հրոսակները՝ զօրաւոր ընդդիմութեան մը կը հանդիպի այդ երկուքին կողմէ: Տեսնելով որ հեռուէն հրացանաձգութեամբ ոչ մէկ փնտս չեն կրնար հասցնել այդ երկու հսկաններուն, որոնք շեշտակի հարւածներով շարունակ զինուորներու ձիերը կը գլորէին՝ հրամանատարը հեծելազօրքին կը հրամայէ գիրքերէն դուրս ելնել և վրայ տալ: Տղաքը հարւածները կ'արագացնեն, շատ մը ձիեր ու զինուորներ ալ կը տապալեն, բայց վերջի վերջոյ կ'իյնան վրայ հասնող հեծելազօրքին սուրերէն: Գերի կը բռնուին երկու հայ և երկու բուլղար, Սլափի Յօնէփ, Խրիստօ, Օննիկ Թորոսեան և Յակօբ Կարապետեան, բոլորն ալ ծանր վիրաւոր:

Թիւրքերու կորուստը յայտնի չէ: Միայն առաջին ընդհարման մէջ ընկածները քաղաք են փոխադրւած:

Իսկ գլխաւոր կուին մէջ ինկած զինուորներուն դիակները հինգ սայլերով զօրանոցները կրեր են: Դեռ մինչև հիմա քաղաքիս զինուորական հիւանդանոցին մէջ կը խնամուին բազմաթիւ վիրաւորներ, որոնցմէ օրական երկու երեքը կը մեռնին: Կուր միջոցին զինուորներու գնդակներէն սպանւած է նոյնպէս գերի բռնւած պէյի որդին:

Յեղափոխականներու կողմէն վերջին կուռղը եղեր է Թէքիրտաղի Օննիկ Թորոսեանը, որ իւրաքանչիւր ձեռքը մէյմէկ ռէվօլվէր բռնած՝ զարմանալի արագութեամբ կրակ է տեղացիներ աջ ու ձախ, զինուորներու գնդակներուն տարափին տակ և այն ժամանակ միայն անձնատուր է եղեր, երբ ռէվօլվէրի փամփուշտներն ալ սպառեր են:

Կուրը մեծ տպաւորութիւն է ձգեր թէ ազգաբնակութեան և թէ չօրքին վրայ: «Նմանը չտեսնւած կուր էր» կը խոստովանին բոլորը: Նոյնիսկ թիւրք հարիւրապետներու պատմածին նայելով՝ տղաքը կուեր են զարմանալի պաղարիւնութեամբ և ոչ մէկ գնդակ պարապ չեն արձակել: Նահատակներուն դիակները ինչպէս նաև վիրաւորները քաղաք մոցուցին զինուորական մեծ թափօրով: Կատղած զինուորները ըստ իրենց վաղեմի սովորութեան՝ վրէժնին վիրաւորներուն վրայ են թափեր, բարբարոսական ծեծի ենթարկելով զանոնք: Ծեծը բանտին մէջ ալ շարունակւած է:

Հարցաբնութիւնը, որ ամբողջ 23 օր տևեց՝ վերջանալու վրայ է հիմա, պատերազմական ատեանին վճիռը դեռ չէ յայտնւած:

Այս առաջին անգամը չէ որ հայ և մակեդոնացի յեղափոխականները ձեռք ձեռքի տւած կուր դաշտը կ'ենեն: Սակայն առաջին անգամն է, որ անոնց արիւնը իրար կը խառնուի: Ու տարակոյս չկայ, որ Թաթուլներու և Սօհրօվներու միատեղ թափած արիւնը պիտի լինի այն զօրաւոր շաղախը, որ անխախտելի կերպով պիտի միացնէ ընդմիշտ հայ և մակեդոնացի ճշմարիտ յեղափոխական տարրերը:

Յարգանք ինկած քաջերու յիշատակին, պատիւ այն հայերուն, որոնք օտար հողի վրայ ևս ցոյց տւին՝ թէ ինչպէս գիտէ կուրի հայ յեղափոխականը...

ՏԱԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ՆԱՄԱԿ ՂԱՍՊՈՒՐԱԿԱՆՆԵՐ)

Դեկտեմբեր 1900

Թիւրք կառավարութիւնը իր փորած հորը ինչալու վտանգին տակաւ առ տակաւ կը մերձենայ Հայկական յեղափոխութեան սպառնալից գիրքը վիճելու այնպիսի մի սխալի մէջ գայթակցուց, որուն աղետալի հետեանքները արդէն սկսած է զգալ և որոնցմէ խուսափիլ անկարելի է: Այդ քրդական կազմակերպութիւնն է:

Նա փոխանակ միջոցներ ձեռք առնելու քիւրդ այդ խուժգուժ և բարբարոս տարրը՝ քաղաքակրթելու և իր տէրութեան ու մարդկութեան օգտակար դարձնելու, տարիներով գրգռեց անոնց վայրենի բնազդը և անոնց հոգիին մէջ ներմուծել ջանաց կրօնական մոլեռանդութիւնը, որ միակ պակասող յատկութիւնն էր զայն բոլորովին վայրենացնելու համար, որպէսզի գործածէ զանոնք ոչ թէ քիւրդէն, այլ տիրող տարրէն ալ աւելի

քաղաքակիրթ մի ազգի յառաջդիմական ձգտումները զսպելու, արդարութեան ձայնը խեղդելու: Նա սարսափած հայ յեղափոխութեան արհաւիրքներէն, կուրացած ատելութեան կրքով, իր նիւթապէս և բարոյապէս քայքայման ենթակայ իշխանութեան իբր նեցուկ նոր սիւն մը ստեղծելու փութով՝ իմաստուն և հեռատես քաղաքականութիւն մը բանեցնել կարծեց կազմակերպելով համիդեական գունդերը, զինելով և արտօնութիւններ շռայլելով անոնց: Սակայն պէտք է ըսել, թէ իր հեռատեսութեան բացարձակ կարճատեսութիւն լինելն, զոր կանխադրած բանիքուն անձ գուշակած էր, ինքն ևս կը զգայ այսօր, հակահարեա՞ծն սկսած է ծայր տալ և արդէն ո՛ւշ է առջին առնելը:

Ով քիչ շատ մօտիկ ծանօթ է թիւրք և քիւրդ ժողովուրդներու բարք ու վարքին, սովորութիւններուն, նա անշուշտ ցնորք կը համարի՝ թէ կարելի է միութեան և սիրոյ յարատե ու հաստատուն կապ հաստատել այս երեւութապէս մի, բայց էպպէս բոլորովին տարբեր երկու գեղերու միջև: Քիւրդը՝ ազատ և անկեղծ, կոշտ ու վայրենի իր լինելուն պէս, սովոր աւարաւորութեան և յափըշտակութեան, հիացող ասպետական գիւցաղնութիւններու, անկարելի է որ համակերպի, մանաւանդ ենթարկւի թիւրքին, որ իր հարէմին պէս առհասարակ ստրուկ և վաւաշտ, խարդախ և երկշոտ, կրօնամուլ ու շահասէր յատկութիւններով տոգորւած է և իրեն միակ իտեալ ունի իր կիրքն ու հաճոյքը: Վայրենի և տգէտ քիւրդը, որ ժամանակ մը գործիք դարձաւ և զեռ դարձած է իրեն աւելի մօտ և աւելի շահաւէտ տարր մը փճացնելու համար, նա ևս սկսած է զգալ իր սխալը, և իրենց մէկ մասին, զոր անւանել չի ներեր գաղտնապահութիւնը, հայերու հետ կրկին մերձեցում մը առաջ բերելու համար ըրած փորձերը ուրախառիթ ապացոյցներ են այս կարծիքի հաստատման, և ապահով եմ թէ պիտի լինի օր մը որ այդ գաղափարը ընդհանրանայ մեծամասնութեան մէջ և օգտակար իրականութիւն մը դառնայ:

Սակայն մինչև այդ երանելի օրը՝ այս հեռանկարով որչափ և հաշտ քաղաքականութեան մը հետեւիլ ուզենք հայերս անոնց նկատմամբ, դժբախտաբար պէտք է խոստովանիլ՝ թէ պարտաւորւած ենք այժմ հակառակ և խոչնդոտ տարր մը նկատել զիրենք մեր դատին ու տեսնել խժդժութիւններու և աւարաւորութիւններու շարունակութիւնը, զոր տաճիկ կառավարութիւնը անմտութեամբ դիւրացուց և այսօր իր թուլութեամբ անկարող է արգիլել:

Այն գաղափարը թէ քիւրդը վնասակար և վտանգաւոր տարր մ'է տաճիկ կնատ կառավարութեան համար, մաքերու նոր յեղաշրջում մը յառաջ բերած է, և տեղիս թիւրք քաղաքացի և զինւորական մեծամասնութիւնը արդէն սկսած են անհաշտ աչքով նայիլ համիդիէներուն, մանաւանդ զինւորականները, երբ կը տեսնեն իրենցմէ արհամարեա՞ծ, բոլորովին տգէտ ու զուրկ զինւորական կանոնաւոր կրթութենէ քիւրդեր՝ իրենց հաւասար կամ իրենցմէ բարձր պաշտօններու հասած: Իսկ գիւղացի տարրը բոլորովին դժգոհ է, որովհետեւ կարգ մը գաւառներու մէջ այժմ ինքն ալ ենթարկւած է հայ գիւղացիի նման քրդական բարբարոսութիւններու: (Աւելորդ չէ ըսիլ՝ թէ ես անձամբ ականջալուր եղած եմ վերջիններու գանգատներուն, երբ անոնք մինչև իսկ իրենցմէ աւելի բարեբախտ կը համարէին հայերն, ըսելով

թէ՝ «գոնէ ձեզ պաշտպանողներ կան, եւրօպացիներ (?), և ձեր վրէժը լուծողներ, ֆէզայիներ): Այս գարնան հարիւրաւոր տաճիկ ստորագրութիւններով մի հանրագիր մատուցեցաւ վալիին ուղղակի համիդիէներու գէմ, սակայն խնդիրը շուտ փակեցաւ, անշուշտ օր մը աւելի բոլորքւած երեան ելնելու պայմանաւ:

Ցարդ պատմածներէս կը հետեւի ուրեմն՝ թէ թիւրք և քիւրդ որչափ իրար գործակից են, սակայն լաւ զգացած են իրար թաքուն դիտաւորութիւններն, ուստի և ներկայ խաղաղ յարաբերութիւնները իրական լինելէ շատ հեռի են: Թիւրքը պիտի շոյէ, գգուէ քրդական փառասիրութիւնը, մինչև յաջողի վերջնականապէս ջնջել հայկական յեղափոխութիւնը: Իսկ քիւրդը բարեկամ պիտի մնայ անոր, որչափ թիւրքը հեռի մնայ ոտնձգութիւն ընելէ քրդական աւանդական իրաւունքներու մէջ և զինքն նկատէ կէսազատ և շատ տեղեր ալ բոլորովին ազատ աշիրէթներ, ինչ որ է այժմ իրերու կացութիւնը: Սակայն տաճիկական կառավարութեան արժանապատուութեան հարցը, տնտեսական շահերն այսպիսով բոլորովին կը վտանգւին: Հայկական կոտորածներէ առաջ մեծաքանակ տուրք մը կառնէր իբրեւ աղնամ, բայց այժմ որ գրեթէ հայ գիւղեր բառին բովանդակ նշանակութեամբ դատարկւած են ոչխարներէ և այծերէ, մինչդեռ քիւրդերու հօտերն անհամեմատ աճած, անշուշտ կառավարութիւնը պիտի ուզէր իր պիւտձէի այդ պակասը լրացնելու համար քրդերէ հաւաքել այդ օրինական տուրքը: Ուստի մարտին պաշտօնեաներ ցրեցան գաւառները: Խաղաղ քիւրդերն մեծ ընդդիմութիւն չբերին, սակայն բոլոր աշիրէթները հակառակեցան: Քիօռ Հիւսէին փաշա, որ ամենահաւատարիմ կարծեա՞ծներէն է 5-6,000 զրուս ոչխարի փոխարէն միայն 5-600 ցոյց տուաւ: Կառավարութիւնը պահ մը ուզեց ուժի դիմել և Արծկէէն 100-ի չափ զօրք ղրկեց: սակայն երբ տեսաւ որ խնդիրը ծանր կերպարանք պիտի ստանայ, անուշի կապեց: Այսպէս և ուրիշ աշիրէթներ:

Այս և ասոր նման բազմաթիւ օրինակներ գոյց կուտան, որ եթէ կառավարութիւնը բռնութեան և ուժի դիմէ իր վիճապետական իրաւունքները գործադրիլ տալու համար, առաջին անգամ ապստամբութեան դրօշը պիտի պարզեն այն քիւրդ պէյերը, որ այսօր «յոռոս կայսերական գահոյից» իրենց հաւատարմութեան ամենահպատակ յարգանքները կը մատուցանեն և զորս սուլութեանը գրաւած կը կարծէ պաշտօններ և շքանշաններ շռայլելով:

Ա Ր Ա Բ Ն Ո Ւ Հ Ա Մ Ի Գ Ի Յ Է Ն

(ՆԱՄԱԿ ԽԱՐԱԲԵՐԻՆ)

3/16 մայիս 1901

Այն օրէն որ թիւրք վարչագիտութիւնը ուզեց իր սպառնացող անխուսափելի անկումէն զինքը փրկելու համար քիւրդ Պրէտորիան գունդը — համիդիէն — կազմել, արդէն իսկ աղէտալի քայլ մը կառնէր ներքին կարգապահութեան ու խաղաղ զարգացման մասին: Աւագակներու հրոսախումբեր զինել՝ այն ևս իբրեւ կանոնաւոր բանակ, անոնց ամենավատ զէնքերուն փոխարէն յանձնել

կանոնաւոր հրացան ու ռազմենի՝ կը նշանակէր անպար-
ման ազատութիւն տալ ոճրագործութեան ու աւար-
առութեան և օրինաւորապէս վաւերացունել վայրագ
բարբարոսներու բոլոր արարքները, քանի որ օսմանեան
կառավարութիւնը սկիզբէն մինչև վերջ աննաճ ու
վանդալ ցեղ մը ցոյց տուած է քիւրդերը աշխարհի ու
եւրօպական դահլիճներուն:

Իհարկէ, առաջները տեսակ մը հպարտ բաւարարու-
թեամբ ընդունեցին այդ ծրագիրը բոլոր թիւրք կարճա-
տես վարչագէտները, արդէն իսկ յաղթական ժպիտով
մը նշմարած թէ՛ ծայր տուող հայկական շարժումը իր
դէմ՝ սքանչելի հակակշռող մը կունենար. — ու այդ
մաքիավէլական խորհուրդը գրեցաւ չորս անիւներու
վրայ ու ճամբայ հանեցաւ իր հասցէին: Անկասկած,
բիրտ օսմանցին իր դիւային ծիծաղը քրքաց, երբ հայ-
կական դժոխային կոտորածներու միջոցին համիդիէն
իր վագերային հաւատարմութիւնը այնքան շնորհալի-
սրէն ցոյց տուաւ իր տիրոջը: Ասիկայ, իրաւ է, յաջողու-
թիւն մըն էր մասամբ, մանաւանդ որ սուլթանը այդ քր-
դական ասպարին ետեւ պահուելուցաւ իր բոլոր դա-
ւաճանի պատասխանատուութեամբ ու ինքզինք պաշտ-
պանեց եւրօպական դիւանագիտութեան դատաստանին
առջև: Ուրեմն այդ ասպարը այնքան վեհանքօրէն պահ-
պանեց զինքը ճգնաժամային վայրկեանին, ու «կենդանի-
ներու տէրը» խիստ պարտական մնաց այդ նշանին: Ուստի,
ինքնին հասկանալի է՝ թէ որքան բաղձալի է անոր
տեւական մշտնջենաւորութիւնը և որքան յոյս դրած
է անոր վրայ դեւ գալիք պատահարներու համար ալ:

Համիդիէն Պրէտորեան գունդն է, որուն գեղարդնե-
րուն վրայ կանգուն մնալ կը կարծէ սուլթանական
խարխուլ գահը, արեան համատարած լճի մը մէջէն
դուրս տնկած՝ ահաւոր առկախ գլխակի մը պէս:

Բայց շատ չուշացաւ ժամանակը, ու դէպքերը վրէժ-
խնդիր յաջորդականութեամբ մը եկան ու կուգան
համոզելու՝ թէ աւազակներէ պաշտպանուած վարչութիւն
մը ինչ անակնկալներ կրնայ պատճառել նոյնիսկ զինքը
կազմակերպողներուն ու իր պաշտպաններուն: Ցակաւին
կը կարծենք թէ ապագայ ողբերգութեան առաջին
արարւածն է այս, որուն յաջորդող տեսարանները
գաղտնիք չեն վարժ աչքերուն:

Այսօր թիւրքիան ծանր արկածի մը առջև կը գտնէ
ինքզինքը:

Գուցէ այս պահուստ արաբական շարժումը ծանօթ դէպք
մըն է արդէն Եւրօպայի համար և խնդիրը իր խոշոր
գծերով ճանչլած առհասարակ սակայն ներքին վիճակը,
նիւքին մարդուն գիտցած մանրամասնութիւնները կըր-
նան աւելի յստակօրէն լուսաբանել իրողութիւնը: Աւե-
լորդ չըլլայ եղելութիւնը քանի մը խօսքով նախաբանել:

Հռչակաւոր յելուզակապետ Իպրահիմ փաշան, որ
համիդիէի գունդին հեղինակաւոր ցեղապետներէն կը
ճանչցուի, այժմ ապաստանած է Ղարաճա տաղի
ամրութիւններուն մէջ, որովհետեւ համիդիէները՝ ասկէ
առաջ յարձակում գործելով Համմար արաբ ցեղին վրայ,
կ'աւարեն ընտիր նժոյգներու ջոլիւրներ, որոնց գումարը
երեւակայելի է թէ բաւականէն աւելի մեծարժէք
կրնայ ըլլալ: Համմարի ցեղապետը Բ. Դրան դիմելով
այդ յափշտակածներուն ետ տրելը ու գոհացում կը
պահանջէ: Ատեն կանցնի, ու սպասուած պատասխանը
կուշանայ զինքը հանգստացնելու: Ուստի, ճարահատած,

երկրորդ հեռագրով մը կիմացնէ Բ. Դրան նորէն՝ թէ
իր իրաւունքներն անտեսած ըլլալով, կը ստիպուի անձամբ
ձեռք բերել իր գոհացումը: Եւ ահա զինուած արաբ-
ներու ընդհանուր յառաջխաղացում մը Իպրահիմ
փաշայի վրաններուն վրայ, որոնք կը բռնեն Յիգրանա-
կերտի շուրջը: Ա'ըստի թէ Համմարի ցեղը իր վնասները
տեղը բերելէ ետք՝ մեծ բաժին մըն ալ թշնամիէն կո-
ղուտ առած է աւերելով համիդիէներու շատ մը
գիւղեր: Իպրահիմ փաշայ՝ պաշարուած ամէն կողմէ,
հազիւ կը փախի Ղարաճա տաղ և իրուղութիւնը հեռա-
գրելով Բ. Դրան ու Երզնկա Դ. — որ զօրաբանակի միւ-
շիրին՝ իր վիճակին վտանգաւոր հանգամանքը կը պարզէ
ու օգնութիւն կը խնդրէ:

Միւշիր փաշան կ'աճապարէ հեռագրել շրջակայ
քաղաքները, որպէսզի տրամադրելի բոլոր վաշտերը
մեկնին Սևարակ: Անցած շաբթու երկու օրուան միջոցին
մէջ՝ Խարբերդի վաշտը, իր պէտքերը կարգադրելով
մեկնեցաւ որոշուած տեղը: Կիմանանք՝ թէ Մալաթիայի
վաշտը ևս մեկնած է, և այս պահուստ խօթը վաշտէն
աւելի զօրք կը գտնուի Սևարակ՝ սպասողական վիճակի
մէջ: Արաբները հասած են մինչև Վէրան — շէհիր ու կը
պահանջեն Իպրահիմ փաշայի գլուխը: Ինչպէս կը հա-
ւաստեն վստահելի աղբիւրներէ, կառավարութիւնը մե-
ծաբանակ ռազմամթերքի բաշխում՝ ըրած է մօտերս
Իպրահիմ փաշայի ու իրեններուն: Ուշագրաւ է այս կէտը,
որովհետեւ վաղը այլևս անկարելի է այդ բաշխուած
ռազմամթերքը հեղ մըն ալ ետ պահանջել: Կը տեսնէք
թէ իմաստուն վարչագէտներ ինչպէս կը դարմանեն հոս
ձախողանքները: Վաղը նոյն այդ սուլինը պիտի դառնայ
կորելու զինքը հայթայթող ձեռքը:

Ներքին ընդհանուր անիշխանութիւնը, երկրին կոր-
ծանարար վարչութիւնը այսօր այնքան կատարեալ աւե-
րում մը կը սպասենայ, որ վիճակի այս գիտակցութիւնը
մտածել կուտայ նոյնիսկ ամենայնտին թիւրքին ալ: Դեռ
անցած օր պաշտօնական թիւրք անձնաւորութիւն մը
կատարեալ իրաւունք կուտար արաբի արշաւանքին,
բողոքելով ինքն ալ իր կարգին համիդիէի վայրագու-
թեանց դէմ, որովհետեւ այսօր համիդիէի շրջանակին
մէջ գտնուող բոլոր քաղաքներու առևտրական յարա-
բերութիւնները իսպառ դադրած են: Արդէն Փոքր-
Հայոց բոլոր ներքին քաղաքներու վաճառականական
փոխադրութիւնը կարավանային ըլլալով՝ երբ ուղևորին
ու ջորեպանին առջև աւազակը կը գոցէ ճամբան, ամէն
բան ըմնցած նկատելու է այլևս: Օրինակ, Բզիկէն Մուշ —
որ երկու օրուայ ճամբայ մըն է — բողոքովին դադրած է
երթևեկութիւնը. քրդիցին աւելի դիւրութեամբ կուգա-
ր Խարբերդ հինգ վեց օրուայ ճամբայ առնելով ու չկրնար
Մուշ երթալ:

Արաբին արշաւանքը արհամարհական դաս մըն է
տիրող վարչութեան՝ սորվեցնելու համար թէ ինչպէս
կարելի է սահմանաւորել սանձարձակ ու անպատկառ
գողերու մարմին մը, և թէ արգարութիւնը որքան ան-
վիճելի պայման մը պէտք է նկատուի հսկելու իրաւունքը
վայելող ուժի մը կողմէ:

Այս ամէնուն հետ սակայն՝ անհանգիստ ու ծանրա-
հոգ մտածում մը կը շեշտուի թիւրքերէն դէպի արա-
բական այս անսպասելի յանդգնութիւնը, և վերին վար-
չութեան ցոյց տուած փութկոտ իրարանցումը, զինուորա-
կան համախմբումը ալ աւելի կը հաստատեն ենթա-

դրուծիւնները՝ թէ անգլիական թելագրութեան մը արդիւնք են այս ամէնը: Խալիֆայական փոխանորդութիւնը, որ ցեղապէս և իրաւունքի տեսակէտով այնքան օրինաւոր փոխանցում մը պիտի ըլլար արաբին համար, պիտի ստեղծէր նաև տեսակ մը ինքնիշխանութիւն ալ Անգլիոյ թեալութեան տակ ու պիտի ապահովէր այս վերջինին Հնդկաստանի հռչակաւոր ուղին: Ահա թէ ինչ է, որ մտահոգութեան ու ներքին սարսափի կը մատնէ թիւրք խորհողը: Ու այդ անորոշ երկիւղն է նորէն, որ շրջնով խուժանին մէջ ալ, կը նորոգէ Հրէաստանի գերութեան օրերուն գուշակութիւնները, վէճերը: Շէյխերու, մօլաւներու հանդիպեցայ, որ կ'ըսէին.

— Արդէն գիրքը մօտ կը ցուցնէ վերջին օրերը. աւե-

րումը հարաւէն, Արաբիայէն պիտի գայ ու խալիֆային գուշակութիւնները պիտի իրագործւին:

Պը գրեմ այս ամէնը երևան բերելու համար այն ընդհանուր վերոյումը, դժգոհութիւնը ու տագնապը, որ կը տիրէ ամէն տեղ թիւրքիայի մէջ: Թիւրք խուժանը՝ երբէք գիտակից չըլլալով իրերու սկզբունքին ու վախճանական իմաստասիրութեանը, զինքը ճնշող տպաւորութիւնը այլապէս կրօնի հրաշալիքով կը մեկնէ:

Միայն ճշմարտն այն է, թէ բոլոր բերանները կը գանգատին. հոգ չէ՝ թէ այդ գանգատը այլազան եղանակով կ'արտայայտուի. թիւրքը գուշակութեամբ, հայը արիւնով և արաբը զէնքով կը յայտնէ զայն — ահա միակ տարբերութիւնը...

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՅԱԿՈԲ ՎԱՐԳԱՆԵԱՆ

(ՃԱՐՏԱՐ, ՄՈՒՐԱՍ-ԽԱՆ)

Սալնոյ 2օր կրկին ցաւալի կորուստ մը ունեցաւ. քաջարի Յակոբի նահատակութեամբ Այդ երկիրը, հակառակ տաճիկ կառավարութեան բարբարոս և խժոժալի հալածանքներուն, միշտ ունեցաւ իր քաջարի զաւակները, որոնք դիւցազնական կռիւններով հայ յեղափոխութեան վարկը միշտ բարձր պահեցին և տեղական ժողովրդեան ամէն խաւերու մէջ յեղափոխական գաղափարը տարածեցին: Յակոբ մինն էր այդ հերոսներէն, և երբ մանրամասն աչքի առջև բերւի իր յեղափոխութեան համար ըրած ծառայութիւններն ու զոհողութիւններն, իր 45 տարեկան հասակին մէջ յեղափոխական խանգն ու աւիւնը, չէ՞ կարելի յարգանքով չի յիշել իր անունը և չգասել զինքը այն ազնիւ անձերու կարգը, որոնք ժողովրդեան ծոցէն կ'եննեն, անոր ծոցին մէջ կ'ապրին և հոն կը զոհեն իրենց կեանքը՝ իրենց նամուսը պաշտպանելու և իրենց ազգը ազատելու միակ սեւեռուն գաղափարով, առանց ուսման և գիտութեան նշոյլն իսկ ունենալու:

Ութը տարիներէ ի վեր Յակոբ կը գործէր՝ հայ յեղափոխական Դաշնակցութեան դրօշակին տակ. թէ զինուոր էր, թէ սուրհանդակ և թէ կազմակերպող: Սալնոյ կոտորածէն վերջ, երբ Թաթուլ Սասունէն Բաղէշ անցաւ,

Յակոբն էր որ ուղևորական պարկը շաւկը, բռնաւորաւ թերթերով և նամակներով՝ առանձինն կը վազէր հոս և հոն և յուսահատ ժողովրդեան յոյս ու հաւատք կը ներշնչէր: Բաղէշէն-Վարին, Վարինէն-Բագրևանդ, Ցարօն, Խնուս, սահմանի կոմիտէներ ամէնքը զինքը կը ճանչնային և կը գնահատէին իրրեւ անձնուրաց թանկագին ընկեր:

1897-ին իր խմբապետութեամբ 66 հայդուկներով անցաւ Խլաթ և հոն նէմրութի գլուխը յանձնեց զէնքերն Աղբիւրի և Գուրգէնի: Նոյն րոպէին ներկայ եղող ընկեր զինուորներն մինչև հիմա իսկ եռանդալիւր խանդաղատանքով կը յիշեն հայկական այդ զինահանդէսն, ուր Յակոբի և Աղբիւրի, այդ երկու հօրեղբորորդիներու խումբերն, Գուրգէնի խումբին հետ հրացանի որոտներով զերար ողջունեցին և ընկերական տաք համայններով զերար ողջագուրեցին:

1898-ին դարձեալ Յակոբն էր, որ 66 զինուորներով անցաւ նոյն գծով, և «Դրօշակ»-ի համարները կարգացողներն անշուշտ կը յիշեն այն դիւցազնական կռիւը, զոր մղեց այդ խումբը՝ Այնթափի դաշտէն մինչև Խլաթ: Ճարտար հոտ կորսնցուց իր միակ եղբայրը և պատերազմի տաք միջոցին իր այդ կորուստով կ'ոգևորէր իր ընկերները՝ չվախնալ մեռնելէ և կուրիլ ցմախ:

98-էն վերջ նա մնաց Խլաթ: Բոլոր ժողովուրդը զինքը կը սիրէր և կը յարգէր: Աղբիւրի մահը թէև պահ մը ընկձեց զինքը,

սակայն յեղափոխական գաղափարով ոգևորած Մուրատ-Խանը անկարելի էր որ վհատէր, նոր թափով սլացաւ գործին մէջ և ուզեց մասնակցիլ արմատախիլ ընելու



այն ներքին չարիքները, որ գործի յառաջացման արգելք կը լինէին: Ահա այդ թափին մէջ էր որ նոյեմբերին Զրհոր գիւղը, առանձինն պաշարւած քիւրդերու և զինուորներու վոճմակէ մը, մեռաւ իբրեւ քաջ հայդուկ՝ 4 զինուոր սպաննելէ վերջ:

Աղբիւրի ընտանիքը Յակոբի մահով տօնեց Աղբիւրի, անոր եղբայր և էս Մխոյի և Աղբիւրի որդի Յակոբի նահատակութեան տարեդարձը: Ահա ընտանիք մը արժանի ամէն յարգանքի և պաշտաման: Երանի՛ այդ ընտանիքի մայրերուն, որ այդպիսի հերոսներ կը ծնին, և փառք այն ժողովրդեան, որ այսպիսի ընտանիքներ կը սնուցանէ իր ծոցին մէջ:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Ե Ո Ւ Ր Զ Ը

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՆ ԹԻԻՐԱԿԱՆ. — Սուլթան Համիդի թագաւորութիւնը — Թիւրքիա չկայ որովհետեւ — կը նմանի թքամանի մը, ուր միշտ պէտք է թքնել: Ոչ մէկ մաքրութիւն կայ, ոչ մէկ սրբութիւն — անվերջ զազանութիւն, անծայրածիր թշուառութիւն, անհեղին անառականոց մը, որու մասին քիչ թէ շատ քարոյական զգացումի համը առած անհատ մը չի կրնար պղծ-զանք չունենալ: Եթէ քարոյականութիւնը մարմին առնէր աշխարհի մէջ եւ հրամայէր տիեզերքի ծակտազրի՞ն, սմնտի քար մը կ'անցնէր Թիւրքիոյ վիզը ու շանլէշի մը պէս կը նետէր ծովերուն անդունդը. պէտք է որ արդարութեան բազուկը ծանր գայ համադրական եւ բէժիմ՝ եղած աններելի չարագործութեան մը վրայ, անարգւած խիղճերը եւ զոհերուն ուր-ւականները հանգստացնելու համար:

Թիւրքիան, քարոյական եւ քաղաքական օրէնքով պէտք է դուրս նետել պետութիւններու ոլորտէն, զի հոն ոչ մէկ բան կայ, որ քարեթուէ եւ ցոյց ապ պետութեան մը կարգուսարքը, օրինաւորութիւնը, իր երկրին յոգածութիւնը, օրէնք ու արդարութիւնը: Մասնակցած ամէն տեսակէտով, քարքարոս եւ արիւն-արքու, մոխիրի վրայ նստած ժողովուրդ մը, Նիոքէի պէս լացող անմխիթար մայրեր, ցոփ, գող եւ մարդասպան փառիշտ ու նախարարներ, — ասոյն հաշիւկէրը, որ կուտայ քսաներորդ դարու սկիզբը օսմանեան որդնոտած եւ գողտ կայսրութիւնը, որ ցոյց տուաւ մ'ի չափ ա յ ի իր բացարձակ ան ընդունա-կութիւնը:

Սարսափելի հարստահարութիւններ տուրքերու համար, ժողովրդի յուսահատ եւ խղճալի դրութիւն, հալածանքներ, երթեւեկութիւններու խափանում միմիայն հայերու համար, չլուծած անգլութիւններ, ապերասան իշխանութիւններ, բացարձակ անապահովութիւն, որ այդ շարատանջ եւ դժբախտ ժողովրդին հետք աշխարհի արհաւիրքը կուտայ: Զկայ ելեւմուտք. երկրին եղած հարստութիւնը բոլոր սուլթանի անձնական գանձը կը թափի — ամէն ծամբայ հոռւ կը դիմէ — որ կը սնուցանէ երկրին անքարոյականութիւնը եւ ապականութիւնը, որ կը փութացնէ երկրին մահը, որ կենդանի եւ փորկուշտ կը պահէ Երեւոյի զազանանոցը, ուր ժամադիր եղած են կասկածելի ծնունդով մարդեր եւ գորս կը հովանաւորեն «գերութիւնի լակոտներ», որոնք չեն ունեցած երբէք «խղճի քննութիւնը» եւ որոնց անունը լսելով չենք զգացած դեռ այն գաղտնի հաճոյքը, զոր կըզգար Մօն-թէսքիո հոռմայեցի կայսեր մը մասին: Ետտ տեղեր մշակութիւնը, վարուցանը դադրած, ցարքած ըլլալով աշխատաւոր բազուկները, մայր հողը ամլացած՝ այլեւս հաց չի տար իր զաւակներուն: Կատարեալ անիշխանական դրութիւն կը տիրէ: Այս տիեզերա-կան տագնապին առջեւ մէկ մարդ մը միայն իր պալատին խորը, դողահար շան պէս ծակը մտած, կը մլաւէ.

«Պետութիւնը ես ինքս եմ»...

Բիւզանդեան արքունիքներու ծակտի գիւն է այդ, ուր ներքին-ներքին եւ սէր ա յ լ ը ն երը կուտեն, կը հատցնեն երկիրը:

«Ծննդիտ պետական մարդու մը համար — կ'ըսէ Ֆրանսա-կան թերթ մը — լաւագոյն քալէն է Թիւրքիոյ այս դրութեան նպատակայարմար ուղղութիւն մը տալու՝ տեւական խաղաղու-թեան թւական մը քանալու համար եւ ժողովուրդներուն դար-մանքը իրենց անկախութիւնը»:

Ժիշը է, շատ անգամ ըսւած ու խօսուած է «հիւանդ մար-դուն» թաղման մասին, քայց շահերու թշնամութիւնը ձգած է

որ շարաշար սատկի այդ հիւանդը, մարդկային պատմութեան ծակընթիւ անխնայեղութիւն տակ:

Դարերէ իվեր Գա հրաման օսմանցիները, որոնց վրայէն ալլահի շուքը անապակաս է, իրենց դժբախտութեան պատճառը վերջապէս յաջողած են գտնել: Միւսիւլման ընտանիքներուն մէջ օտար ուսուցչութիւններու մուտքն է որ իսլամական առաքի-նութիւնը կը փճացնէ, երկրին քարքերը կ'արէ եւ դէպի վե-հապետը հնազանդութիւնը կը թուլցնէ: Փատիշահին իրադէն անէծք կը կարդայ այդպիսիներու դէմ, եւ Պօլսոյ թերթերը այդ իրադէնն աղթի «Ժողովրդի հայր»՝ կ'անուանեն սուլթանը: Խոս-տասիրտ Կատմին իսկ պիտի նսեմանար օսմանցիներու քար-քերու անարատութեան նախանձախնդիր եւ պալատական զեղխութեանց մէջ լողացող վեհապետի մը հրամանին դիմաց: Զէ՛ կարող առաքինի ու տիպար Աբդուլ Համիդը, որ չէ ծանշցած սրտի մեծ թռիչներ, տալ մեզի իր «մտածումները», իբր նոր Արեւիկոս, որ իր մարդկային ամէն զործեր իր «խղճի քննութիւնը» կ'անցնէր:

Դժբախտ այդ երկիրը, որուն վեհապետը իր ժողովրդին հետ կը խաղայ, ինչպէս օձը իր որսին հետ, եւ որուն մեղսակից են թիւրք թուլէջը հրապարակագիրները, որոնք դաւաճանօրէն ամպերը կը թոցնեն իրենց փատիշահին բոլոր անօրէնութիւն-ները, էջութիւնները: Սուլթանը, օ՛հ, անգամ մըն ալ կը փրկէ Թիւրքիան ետ հրելով միւսիւլմանները դէպի խաւարի խորը, իր երջանիկ տգիտութեանց մէջ:

Այդ արմատական քարենդոգութիւնը զատ, որ փրկութեան խա-րխիսը պիտի ըլլայ օսմանեան կայսրութեան, այժմ ամէն ժա-մանակէ աւելի Թիւրքիոյ հիմքը աւազի վրայ կայնած են: Երկրորդ փողերն են որ կը հնչեն Թիւրքիոյ պատերուն տակ: Մակեդոնիոյ մէջ ամէն օր ընդհարումներ, որոնք նախա-տեսել կուտան ապագայի մեծ հրդեհը: Խոսք մը մակեդո-նացի հայդուկներ, որոնց հետ միացած էին վրէժխնդիր հայեր ալ, էտէքնէի զազանաքարոյ վալիս առեւանգելու փորձին մէջ փառաւոր ընդհարում մը ունեցան թիւրք ամբողջ քանակի մը դէմ, սպաննեցին քննաւոր հարուստ պէյի մը, Տէրտի Մուս-թաֆայի տղան, զոր լեռը հասած էին, եւ անթիւ զինուորներ, իրենցմէ ալ տալով քանի մը զոհեր եւ ձերբակալածներ: Սի-լանիկի մօտ նոր կռիւ մը, ուր օսմանեան զօրքեր ետ մղելէն զատ՝ քանիներ ալ զերի կը բռնին:

Ալքանիան, որ կը հայթայթէ օսմանեան քանակին կարեւոր զօրաբաժիններէն մէկը, կը խմորի. ապագայ աղէտալի շարժումը կը ծոցորի հոն: Պալքանը հրաբուխ ըլլալու կը պատրաստի եւ ցա-ւալին այն է, որ օսմանեան պետութեան մէջ կացութեան գի-տակցութիւնը տխուր շնչիւնութեան հասած է. ամէն մարդ ան-համբեր եւ անգոր կըսպասէ, թէ ի՞նչպէս պիտի ըլլայ ամբողջ կայսրութեան մը նաւաբեկութիւնը:

Արաքիան նմանապէս պարբերաբար կ'ապստամբի. հակա-խալիֆայական փրփականտ կըլլայ իսլամական աշխարհին մէջ: Հպատակ տարբերուն առեւելքիցը դէպի արիւնարբու եւ օձի պէս պաղ բէժիմը երթալով կը ծովանայ, որ պիտի խեղդէ սուլթանը եւ իրենները:

Գահակալութեան տարեդարձը ժողովրդին համար սեւ օր մըն է: Այդ առթիւ երեքհարիւր հայ ձերբակալած ու քանտերը լեցու-ցած են, վախնալով որ հրամանով եղած Սասունի ջարդին վրայ՝ Պօլսոյ մէջ ցոյցեր կ'ընեն պատահի: Օրմանեան պատ-րիարքը, — մարդ մը, որ իր յատակը պատրիարքական գահուն վրայ դնելէն իվեր փառասիրական փայլուն երեւակայութիւն ունի — իր փեսին համար, կ'ըսեն, ազգէն... օժիտ կը պատրաստէ: Երէկ քոշայ, այսօր փաշայ:

Այս բոլորը սեւգուժ նշաններ են, թէ սուլթաններու զահը անվերականգնելի է, թէ ան կ'արշաւէ մահաւն ետեւէ, անձա-պանութեան ակտէն բռնւած խենթի մը պէս: Դր տգիտութեան, անկարողութեան վրէժը կը շանայ մարեւ անմեղներու արեան մէջ. պիտի ողնշանայ առանց ծանշցած ըլլալու սրտի եւ հոգիի քարոյական շարժումները, առանց վայելած ու տեսած ըլլալու խաղաղութեան ու ազատութեան օրարեւը ու ծիրանի գօտին:

Օսմանեան միութեան առաքեալները — խեղճ Ռիզա — կըսպասեն քերանին քաց, որ իրենց սուլթանը կենավորներու արեան մէջ երկրին միութիւնը թրէ:

Սրիկայ սուլթանին արիւնի ծարաւը, վայրագութիւնը միայն հայերով չի գոհանար: Թշուառութեան, մահաւն սարսափը ամէն տեղ է: Այսքան աղէտներէ ետքը՝ նիւթապէս եւ քարոյապէս փճացած ժողովուրդին ծոցէն զազաններու սիրտը լեղի պատատ ընող վրէժխնդրութիւն մը չծնաւ դեռ:

Եթէ Թիւրքիան ունենար gentle Brutus — առաքինի Բրուտոս մը...

* * *

ՓՐԱՆՍԱ ԵՆ ԹԻԻՐԱԿԱՆ. — Արեւելքի մէջ Ֆրանսական անունը եւ ազդեցութիւնը կը հիւծի, շուրճիւ այն «սպասողական եւ

ծնունդից՝ քաղաքականության, որը վերջի ատեններ Քրանսական հանրապետությանը իրեն դառնալու ընտրեց միջազգային խնդիրներու մէջ, մասնաւորապէս Արեւելքի մէջ, եւ մասնաւորապէս ան հասկանալի հաճախակաւութեամբ, որ ցոյց տուաւ ղէպի ուղեւորական ճգնաժամները եւ փայփայեց սուլթանի քմահաճոյքները: Հինցան այն օրերը, երբ թրքական Արեւելքի մէջ Քրանսիայի անունը պատկանելի էր, երբ անոր քաղաքականութիւնը կը շարունակէր արեւելեան ազգերը, երբ Քրանսական դեսպանը «առաջնութիւն» ունէր միւս դեսպաններուն վրայ, երբ Քրանսական դրօշին տակ կը ծածկուէին թիւրքի մտնող շատ վաճառքներ եւ Քրանսական քաղաքացիներու տունը անբռնաբարելի էր:

Սուլթանը այսօր արհամարհելի քանակութեամբ մը համարած է Քրանսան, կոթնելով աւելի ուժեղներու պաշտպանութեան վրայ: Հայկական ամբողջ շարքերու միջոցին, իր կաշառակեր մամուլը՝ սակաւաթիւ ազնիւ բացատրութիւնով՝ ծուկի պէս մունջ մտաց, իսկ կաթողիկէ աշխարհքը ուրախութեամբ խելայեղ եղած էր, որ հայերուն դժբախտութիւնը պիտի մղէ զիրենց Ս. Պետրոսի նաւակը նետուի: Դժբախտ Քրանսան մեր դժբախտութեան մէջ յենակէտ մը գտնել երազեց, գողունի միջոցով հայ տարբին թշուառութիւնը գնել, զայն կաթողիկէ ընելով, հետեւապէս... Քրանսաւ: Քրանսական Արեւելքի քիչ շատ ծանօթ հեղինակաւոր անձնաւորութիւններ, ուղղակի կամ անուղղակի, այդ ցաւազար թէօրին ուժ տուողներ էին, առանց խորհիւն եւ լուրջ նախաձեռնութեան մը լուսաբանութիւնը բերելու խնդրին մէջ: Սա չափը միայն հասկացած էին, որ հայ տարբը ուժեղ, ծնունդէն եւ ծիւղն տարբ մըն է, որ կրնայ լաւ ուսմիտայ մը ըլլալ այն տէրութեան, որուն համակրութիւն ունի, քայց խելքներին չէր հասնէր հարկաւոր միջոցները եւ կարծես խորհիւն լաւ չէին ծանցած հայուն ճաւաղութիւնը, ազգային նկարագիրը: Արդէն Քրանսական կառավարութեան մեծագոյն թերութիւնը եւ զարմանալիութիւնը անհետաքրքրօրէն շփոթեցան է այն ժողովուրդները, որոնց հետ շահերով կապած է: Այժմ իր նահանջին մէջ՝ կորակոր նահանջ մը՝ դեռ ստուգապէս չի գիտեր, թէ ինչ բնական եւ թաքուն պատճառներ Արեւելքի մէջ Քրանսայի պարտութեան դողանքը հնչեցուցին: Փախստի արդարացում մը երբեմն կը թռչի իրենց բերելէ, թէ Քրանսան՝ որուն «միծնողիւնը աշխարհի յոյսն է», կըսէ Բուզէն՝ իր չափազանց մարդասիրութիւնով տուած է. կը մայ ուրեմն իրեն ամփոփելի «վերապահի քաղաքականութեան» մը մէջ, աչքի առջեւ ունենալով միայն Քրանսական անմիջական շահերը: «Մարդկութիւնը քաղաքավար չէ եղած միշտ մեզի», կ'ըսէր վերջերս Քրանսայի մեծ թերթ մը: Այս գաղափարը լուեւայն, եթէ ոչ յայտնապէս, Քրանսայի քաղաքականութեան առաջնորդող մուսանքին մէջն է:

Եթէ Քրանսան, «Աստուծոյ ծննդաբնութեան» ինչպէս կ'ըսէ Եւքսիքի՝ հայերու շարքերուն հանդէպ չկրցաւ մարդկային վերանման շարժում մը ունենալ, ելեւմտական եւ դրամատիկներու ընկերութեան մը շահուն համար պատրաստ է սակայն սուլթանը դարձի բերել: Պօլսոյ քարափներու խնդիրն է առ, որ ասիական աղմուկ կը հանէ եւրոպական մամուլին մէջ եւ կը պարսկայ միջնորդի երկու տէրութեանց միջեւ դիւանագիտական խզումի եւ պատերազմի: Սուլթանը անմտօրէն, վերջապէս, պատուած էր Ողիսիւսի հովերուն տիկը:

1890-ին սուլթան Համիդ Քրանսական ընկերութեան մը շնորհած էր Պօլսոյ քարափներու, տօքերու, միջերանցներու եւն շինութեան արտօնութիւնը: Ընկերութիւնը, պայմանագրութեան ուժով, պիտի սեպակաւէր ծովուն մէջ շահած գետինը եւ եթէ ուզէր՝ ծախէր իր իրը: 40 տարի ետքը, սակայն, թիւրք պետութիւնը իրաւունք պիտի ունենար գնել արտօնութիւնը: Երկու տարի առաջ քարափներու մէկ մասը միայն լնցած, սուլթանը ընկերութեան իմացուց, որ չարունակին այլեւս քարափներու շինութիւնը, զի ինք մտադիր է անմիջապէս գնել կառավարութեան հաշոյն: Ատոր վրայ ամէն տեսակ դժարութիւններ հանեց ընկերութեան առջեւ, արգելք ըլլալով անոր իր աշխատանքին արդիւնքը շահագործելու, այնպէս որ ընկերութիւնը իր տարիներու աշխատանքին մէջ շուրջ հերկած եղաւ միայն:

Սուլթանի այդ ունեւորութիւնները կը բացատրեն անով որ իբր թէ քարափները կը դիւրացնեն յանցաւորներու փախուստները եւ երկրին մէջ ումբի, գէնքերու եւն մուտքը: Ապահովապէս եթէ թիւրքերուն ըլլան քարափները, մէկ տարիէն քար ու քանդ կըլլան:

Քրանսական դեսպանը ստիպեցաւ միջամտել Քրանսական քաղաքացիներու շահերը պաշտպանելու եւ միանգամայն թոյլ չտալու որ Քրանսական փայլազնեցութիւնը բոլորովին շուրջ խնայ, փոշիանայ Արեւելքի մէջ:

Դեսպանը, հիմնելով պայմանագրութեան օրէնքին վրայ, երկսայրի դրութեան մը մէջ դրաւ սուլթանը՝ կամ գնել քարափները կամ թոյլ տալ որ ընկերութիւնը ազատօրէն իր իրաւունքները գործադրէ:

Այս տնայն եւ անօթի քուլէին, Ռապուլէի քառամուն, երբ զանձը պարապ կը գոյ, երբ երկրին վրայ ուժեղորոշութիւն չէ մտացած, երբ Երուզղը ցորենը դեռ չբուսած կըրած հատուցած է, դժուար է 45 միլիօն Քրանս վճարել: Փոխառութիւն մը միայն կրնայ այդ անել դրութենէ դուրս քաշել: Գայն, քայց այդ երկար ժամանակի կը կարօտի եւ մեծ յոյսի տեղեր ալ չիկան:

Պալատը, աղիքը թիւրքոյ, որ կերկուս եղած կը լափէ երկերը, խոյս պատասխաններ տուաւ եւ իվերշոյ անքաղաքավարօրէն չի գնաւ միջնորդի «Եթէր Կոնստանի» ծանուցադրին պատասխանել:

Կոնստան — իր ծրագիրներուն մէջ ուժով եւ յամտող՝ մարդը, ինչպէս կը սիրեն ըսել Քրանսական թերթերը — ունկընդորութիւն խնդրեց սուլթանէն — նորէն լուրիւն. պարտաւորեցաւ դեսպանը առանց հրաւերի գնալ պալատ, ուր իրեն ըսեցաւ որ «սուլթանին ակումն ցաւելուն» չի կրնար ընդունիլ, եւ եթէ կուզէ՝ Բ. Դուռը թող երթայ: Զափէ դուրս այդ անարգանքին վրայ, դեսպանը Furia francese է բռնած՝ Քրանսայի հանրապետութեան եղած նախադիմքը իսկոյն հեռագրեց Տէլհաւէին, աղիւնով որ գոհացում պահանջի սուլթանէն:

Ալլահի շուքը աս լսածէն, տակը բռնկածի պէս, լուր դրկեց Կոնստանին որ պատրաստ է գինքը ընդունել, թէ պարզ թիւրքիմացութիւն մը եղած է: Տեսակցութեան ատեն նորէն յայտարարեց որ ինք (սուլթանը), ինչ ալ ըլլայ, պիտի գնէ քարափները, քայց առայժմ ընկերութիւնը կրնայ իր իրաւունքները գործադրել, եւ թէ Քրանսական ուրիշ քաղաքացիներու պահանջները եւ միւս առկախ հարցերն եւս պիտի կարգադրին: Սուլթանը պատուի խօսք կուտար: «Հանի մը օր վերջը դրկեց խոստացած իրադէն, քայց միայն քարափի ընկերութեան գոհացում կուտար: Կոնստանը՝ զգալով որ «խաբօր»-ի մը գոհն եղած է եւ որպէսզի Քրանսայի Դրան հետ ունեցած անլոյծ հարցերն միանգամ ընդմիջու վճռին ու օսմանեան նենգամիտ կառավարութեան՝ իրենց համբերութիւնը սուղի նստեցնէ, գոհ չեղաւ քարափներու միւս քաղաքացիներուն բողոքապահանջներին գոհացում՝ սպառնալով մեկնիլ Պօլսէն եւ ծամբու դնել Փարիզէն թիւրքոյ դեսպանը Միւնիք պէյ, մաշ նաւանդ որ միջազգային քաղաքականութեան մէջ Քրանսան թեւերը ազատ կըզգայ իր խօսքը քաշեցնելու համար:

Թիւրքերը այս անգամ ալ խաբեցին Կոնստանը, ձգձգելով, քաշեցնելով իրենց տուած խոստումները, որուն մէջ սուլթան Համիդ ինքնիրեն կուտայ մերթ կայմայապետի մը դերը, մերթ գինքը շրջապատողներուն իբր գործիք: Այս մարդուն զանց նստելէն իվեր, թիւրքերու միջազգային դիւանագիտութիւնը անաւոր հակասութիւն մը եւ թիւրքիմացութիւն մը եղած է: Սուլթանը, իրեն զարմելի բռնաւոր, ամէն բանի մէջ իր քիթը խօթած ու կամքը գործադրած է եւ երբեք ալ չէ հասկցած այդ անհաբազատը երկրին ոչ միայն գերագոյն, այլեւ տարրական շահերը, հակառակ ինքզինք բան մը ցցնելու հովերուն: Կը պատմեն, որ հաւանական իրադէսը եւ... սէքը գրաւելու համար, անոնց կը խօսի եղեր, որ ինք մեծագոյն դիւանագէտն է եւ թէ Տաճկաստանը իր օրով փառքի գագաթնակէտը հասած է:

Քրանսական դեսպանը, ճարաստ եւ անպատուած զգալով ինքզինք սուլթանի անպարկեշտութենէն եւ խաբեքայութիւններէն, օգոստոս 26-ին ձգեց Պօլսոյ: Սուլթանը դեռ չէր սպասեր, որ Կոնստանը իր սպանալիքը կը գործադրէ. իմանալով այդ անպատուի մեկնումը, շանթահար եղած, դրկեց երկու արաբողապետներ, աղաշելով, պաղատելով, որ չհեռանայ Պօլսէն, խոստանալով որ պատրաստ է նորանոր արտօնութիւններ եւս ընել — գուցէ «իրջանկութեան դոններ» ալ բանալ: Կոնստան սակայն ետ ծամքեց պալատին այդ լամուկները՝ ըսելով որ «սուլթանի բերանացի խոստումներուն այլեւս հաւատ չ'ընծայեր. խնդիրը փողի վրայ չէ միայն, այլ նաեւ ուղղամտութեան», որով առանց այլեւայլի միջոց բանակցութեան մտնել եւ ծամբայ ելալ ղէպի Փարիզ, ձգելով Երուզղը ապուշ եւ տեղադրելու դրութեան մէջ եւ իր հետ տանելով Քրանսայի կրած անպատուութիւնը:

Թէ որքան լքնութիւն կայ Կոնստանի այդ վճռական քայլին մէջ, ապագան պիտի ցցնէ: «Գիտեմ թէ ինչ կ'արժէ բերանացի խոստումները թիւրքոյ մէջ», կ'ըսէր Քրանսայի դեսպանը Մապէլի պատգամաւորներուն: Եթէ հայկական շարքերուն օրով այդ փորձառու եւ վսեմ լեզուն բանեցնէր... սուլթան Համիդ պիտի փորքը կը քաշէր: Ո՛վ կրնայ ըսել թէ «Եթէր» Կոնստանի այդ վարմունքը նոր արտօնութիւններ փրցնելու ցոյց մը չէ Տիվանէն, որ արդարաւանջ եւ ժողովրդասէր քաղաքականութենէ գուրկ, շինականութիւններով եւ ծոյլ յօդանշումներով ժամաւաճառ կըլլայ. փոփոխամիտ, նենգամիտ, առանց շրջապատութեան եւ հեռատեսութեան, անպարտաճանաչ եւ անվստահելի, յարգը, պատիւը աղտոտած աշխարհի առջեւ: Ցարի չէ հասկցած, թէ ինչ ազնիւ ծրագիր ունի թիւրք պետութիւնը իր ժողովրդին քարելաւորութեան համար. միայն սա յայտնի է

որ թէ ներքին եւ թէ արտաքին յարաբերութեան մէջ, կը ջանայ միշտ խոյս տալ այն բանէն, ինչ որ կը կոչուի որոշեցութեան մէջ տպաւորութեան միջոցով:

Կոնստանդնուպոլսի մէջ արեւելեան կատակ-ողորմութեան եւ թիւրքերու տարեգրութեան մէջ շահեկանութենէ գերծ չէ: Եթէ շան էժէլը գայ, կ'ըսէ արեւելեան առածը...

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

«Պ Ր Օ Ա Ր Մ Է Ն Ի Ա»

(№. №. 17, 18)

Պիէռ Գիլեառ 17 թւի կիսամսեակը նւիրած է գերմանացի ճանապարհորդ դօկտ. Հիւգօ Գրօթէի մէկ յօդուածին, ուր յիշեալ ճանապարհորդը կը նկարագրէ Տրապիզոնի ու Վարինի միջև տարածուած երկրին աւեր ու անապատ վիճակը: Վարզուհանի աւերակներուն մօտ հիւրասիրւած է հայ գիւղի մը մէջ, որուն գետնափոր բնակարանները խլուրդի որջերու կը նմանցնէ: Այդ գիւղը, որ ջարդերու ժամանակ երեք օր շարունակ լաւերու աւերումներուն ենթարկւած էր, սարսափելի աղքատութեան մէջ էր՝ աշխատող ձեռքերու Վովկաս գաղթելուն պատճառով: Գերմանացի ճարտարագէտը երկար ժամանակ չէ կրցած մոռնալ իր տեսած ցաւագին դէմքերը և չի կրնար զսպել իր մէջ տագնապի ու կարեկցութեան զգացումը մը, ամէն անգամ որ յիշողութեանը կը ներկայանայ բնութենէն ու մարդերէն ջախջախւած և սարսափելի ճակատագրէ մը ընկճւած այդ խեղճ ժողովուրդը:

Այս միւսնոյն դօկտօրն է—աւելցնենք մեր կողմէն—որ ասկէ երկու տարի առաջ Փոքր-Ասիոյ արեւմտեան մասին մէջ կատարած մէկ ճամբորդութենէն ետքը, հետեւեալ անհետեւ զատաստանը կ'ընէր հայերու մասին՝ գերմանական *Die Kritik* հանդէսին մէջ —

«Արեւելք ճամբորդողը թիւրքերուն կը համակրի, յոյները կ'արհամարէ, իսկ հայերը կ'ատէ: Հայերը շատ քիչ բացառութեամբ՝ վաշխառուներ ու վաճառականներ են և տղուկի պէս կը ծծեն տնտեսապէս թիւրք ժողովուրդին արիւնը: Այս կէտին մէջ պէտք է փնտռել հայկական կոտորածներու բուն շարժառիթը»:

Իսկ հիմա, անձամբ Հայաստանը պտըտելէ յետոյ, «ուսեալ» դօկտօրը ինք իր լեզուով կը լզէ իր թքածը:

*

Նոյն թւին մէջ Ժ. Գորիս «Համագրական կեդիքներ» վերնագրով յօդուածի մը մէջ ազդուօրէն կը հերքէ սուլթան Համիդի այն յաւիտենական չքմեղանքը՝ թէ ինք պատասխանատու չէ կայսրութեան մէջ կատարւած խժգժութիւններուն և թէ իր հրամանները չեն գործադրւիր վալիներու կողմէ: Թողածագիրը մէջ կը բերէ հետեւեալ երկու հետաքրքրական փաստերը.

Գերմանիոյ Վիլհէլմ կայսրը, Պաղեստինի վերջին ուխտագնացութեան ժամանակ, ոստիկանութեան նախկին նախարար տիրահաճախ Նազըմ փաշայի հետ ունեցած մէկ տեսակցութեանը միջոցին երբ կը հարցնէ թէ «ո՞վ է վերջին ջարդերու իսկական պատասխանատուն», Նազըմ չի վարանիր պատասխանելու՝ «բայց նորին վեհափառութիւնը ինքը»:

1894-ին Վանի նորընտիր կուսակալը պաշտօնատեղին

մեկնելէ առաջ՝ պալատ կերթայ, սուլթանին հրամանները ստանալու: Եւ երբ Հաճը Ալի պէյի դայիրէյին մէջ կը նստէր, ներս կը մտնէ եպարքոս Ճէվատ փաշան ու կըսէ. «Փաշա, նորին վեհափառութիւնը կ'իմացնէ ձեզ, թէ վերջին ծայր խստութեամբ պէտք է վարւիք հայերու հետ»:

Եւ երբ ծերունի փաշան կը փորձէր բացատրել թէ խստութիւնը ոչ մէկ լաւ հետեւանք չի ունենար, Ճէվատ կը յարէ՝ իր խօսքերուն վրայ շեշտելով՝ «Ես ձեզ կը կրկնեմ՝ նորին վեհափառութեան հրամանները»:

— Բայց այդ՝ հայերը ապստամբութեան մղել է:

— Եթէ ապստամբին, լաւ. դուք ալ կը ջարդէք»:

* *

Մուշի և Սասունի վերջին դէպքերուն մասին *Pro Armenia*-ին և «Դրօշակին» զարնւած հեռագիրները եւրօպական գրէթէ լոյրը մեծ ու փոքր թերթերը արտասպեցին՝ ներկելով այդ առթիւ բողոքի և արգարութեան ցատուով լեցուն՝ բուն նկատողութիւններ, առաջնորդողներ և ուրիշ յօդուածներ: Յիշենք, օրինակ, *Temps, Aurore, Autorité, Dailly News, Frankfurter Zeitung* և ինչ: Եւրօպական հանրային կարծիքի այս անվերապահ շահագրգռումը ապացոյց է, որ քաղաքակիրթ աշխարհը, առանց կուսակցութիւններու խտրութեան, վերջապէս կ'ըմբռնէ հայկական սարսափներու կ'անխամ տաժ ու մը և մեծութիւնը:

* *

La Petite République իր օգոստոս 2-ի թւին մէջ հրատարակած է Փրանսիական խորհրդարանի պատգամաւոր Գիւստավ Բուանէի մէկ ընդարձակ յօդուածը՝ «Հայաստանին համար» վերնագրով:

«Կ'Պօլսի մէջ թագաւորող օսմանցի կալիգուլան» — կ'ըսէ յարգելի հեղինակը իր կարեւոր յօդուածին մէջ — 95-96-ի ընդհանուր ջարդերէն յետոյ աւելի փորձուած ու խոհեմած՝ հիմա մասնակի կոտորածներու և սիստեմատիք հարստահարութեան նւազ աղմկալի մեթոդով յառաջ կը տանի ամբողջ հայ ցեղը բնաջինջ ընելու իր ծրագիրը: Թողածագիրը կը յիշէ «Պրօ Արմենիայի» վերջին երկու պրակները, որոնք լի են սուլթանի այս եղեռնագործութիւնը մատնանշող ահաբեկի մանրամասնութիւններով: «Որովհետեւ շատ հաւանական չէ, կը վերջացնէ յօդուածագիրը, որ պ. Գիւլկասէ այս սարսափներու մասին տեղեակ պահէի այն գրասենեակներու կողմէ, որոնց պետն է ինք, ես մասնացոյց կ'ընեմ իրեն Փրանսական քաջարի թերթի» «Պրօ Արմենիայի» այս վերջին երկու պրակները»:

Միւսնոյն հեղինակը պարիզեան *Lanterne* լրագրին օգոստոս 30-ի թւին մէջ ևս հրատարակեց առաջնորդող մը, ուրկէ հետեւեալ կտորները կը թարգմանենք.

«Բայց եթէ լաւ ապացուցուած է, որ սուլթանի խոստումներուն վերջը չի գար մինչև որ ակոյալ չցուցնեն անոր, թերեւս յարմար ըլլար որ Փրանսական և մինչև իսկ եւրօպական մամուլը օգտուէր այդ դասէն Արդիւ Համիդի հանգիստաւոր խոստումներուն վերաբերմամբ ուրիշ աւելի կարեւոր խնդրի մը մասին՝ քան քանի մը տարիէ ի վեր անվճար մնացած առնելիքները: Կ'ուզեմ խօսել Պօլսոյ վեհապետին հայերուն նկատմամբ ստանձնած յանձնառութիւններուն մասին: Այս յանձնառութիւնները երկար-բարակ արձանագրուած են Բերլինի

դաշնագրութեան մէջ, զոր ստորագրողներէն մէկն ալ Ֆրանսան է: Ֆրանսական կառավարութիւնը, որ Արդիւ Համդէն չճանչցած առնելիքներու վերաբերեալ քանի մը դրական պահանջներ բանաձեւելէ աւելին ըրաւ, չէ՞ր կրնար յիշեցնել Պօլսոյ մենամոլին որ ան դրժպէտ է ուրիշ յանձնառութիւններ քան անոնք, որոնց գործագրութիւնը իրմէն կը պահանջէ: Մանաւանդ որ այս յանձնառութիւնները երկկողմանի են. անոնք նոյնչափ կը պարտաւորեն Ֆրանսան, որչափ սուլթանը: Վէճի տակ եղող առնելիքներուն հետ Ֆրանսան թող ձեռք բերէ կոտորածներու դադարումը Հայաստանի մէջ, և մէկ անգամուան համար մենք պիտի ծափահարենք մեր դիւանատան գործունէութիւնը:

Մակեդոնական Բարձր Պօմոտէի նախկին նախագահ Բ. Սարաֆօվի դատի և արդարացման առթիւ «Դրօշակի» խմբագրութիւնը շնորհաւորական մի հեռագիր ուղղեց նրան և հետեւեալ պատասխանը ստացաւ.

Սիրելի ընկերներ,
Շնորհակալութիւն ձեր շնորհաւորութիւնների համար: Դուրս գալով բանտից, ես աւելի քան երբեքիցէ պիտակցում եմ մեր ընդհանուր կուի անհրաժեշտութիւնը յանուն մեր երկրների ազատութեան: Յուսամք, որ մեզ միացնող համերաշխութիւնը դառնալով միշտ աւելի սերտ ու անկեղծ՝ պիտի չարունակւի արտապայտելի նաեւ կենդանի գործերով:

Եղբայրական բարեւանքով

Բ. ՍԱՐԱՖՕՎ

Սօֆիա 27 օգոստ. 1901

Թ Ե Ր Թ Օ Ն

Դ Ա Ր Բ Ն Ի Ե Ր Գ Ը

(Շարունակ. — Տես № 5)

«Արե՛ր՝ փշրեմ՝ ես քո խոփը, տամք դարբինին կոնու, կոնուր-կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ՝ կուեղու: Եղբայր՝ հայեր, առէ՛ք խոփը, տէ՛ք դարբինին կոնու, կոնու-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու:»

ԳԱՄԱՌ-ՔԱՅԻՊԱ

V

Գարուն է, որդիք, գործի ժամանակ.
Գործն է վերջ տալիս ցաւին ու հոգսին.
Ով չի կամենում հեծել լծի տակ,
Նա ուժ պիտի տայ բազկին ու մէջքին:
Գարուն է, որդիք, ամէնքն են գործում,
Գործն է գին տալիս մեր ցաւոտ կեանքին.
Սե օրը ծով է, բախտն է պակասում,
Բախտը չէ տւած անգործ անձարին:
Թէ ուրիշները քրտինք են թափում,
Մենք պիտի թափենք արիւն ու քրտինք...
Ով երկունք ունի, նա ջանք է անում,
Երկունքի ցաւը օրհնել է երկինք:
Ողջ տիեզերքը երկունք է վաստակ,
Ցաւն է հիմունքը պողաբերութեան,
Կեանքի երկունքը խորն է, անյատակ,
Նրա ծնունդը պէս-պէս անսահման:
Ցաւով է ծնւում ծիւր ծաղիկի
Հողի տակ պառկած փղբրիկ սերմից.

Ցաւով է բացւում թերթը կոկոնի
Ուռած, բողբոջած բոյսի արգանդից:

Ցաւով է ծնւում զաւակը մօրից —
Քաղցր պտուղը վշտի, խնդութեան.
Ցաւն է դառն արցունք քամում աչքերից
Այլուդ սրտերի բոցերի վրան:

Ցաւ է կարկաչում ծնունդի ճիգով
Ժայռի խոռոչում վտակը խեղդւած,
Հին ցաւն է հեգնում ուրախ քրքիչով,
Երբ դուրս է ժայթքում կապանքից փրկւած:

Ցաւ է մռնչում դարաւոր կաղնին
Ծանր կացինի բիրտ հարւածներից,
Այդ ցաւի ձայնը կեանք է շատերին. —
Որչափ բախտեր են ծնւում մի մահից...

Երկիրը գարնան ցաւ է մրմնջում,
Երբ յօշոտում է սուր խոփը նրան,
Կեանքն այդ մրմունջից իր երգն է հիւսում —
Մեծ երգը վշտի, նաեւ ցնծութեան:

Ցաւ է սօսափում տերեւը դեղնած՝
Մեղմ օրօրելով ոստիկի վրան,
Ցաւի երգ ունի քամին մոլորւած —
Երգ լուռ վշտերի, մռայլ գիշերւան:

Կոշտացած սիրտը վշտի երկունքով
Փափկում է ինչպէս ակօսւած երկիր,
Եւ ազնիւ սիրտը ցօղած արցունքով
Սրբազան յոյսն է ծլում անպատիւ:

Թանձր ամպերը կախում են վերում՝
Կենսատու անձրեւ ուսերին շալկած,
Դժբախտ երկիրը հեծում է վարում՝
Սաստիկ երաշտով խանձւած, պապակած:

Բայց երբ կայծակը բոցոտ ակօսով
Պատում է կուրծքը թղպոտ ամպերին,
Ցօղերն են իջնում զով կաթիլներով,
Նոր կեանք շնորհում տառապող երկրին:

Բնական ցաւից աւելի հզօր
Դուշմանը ցաւ է դրել մեր մէջքին.
Արիւնն է բռնել մեր դաշտեր ու ձոր,
Ցաւն է լոկ տէրը մեր դժբախտ երկրին:

Ախ... Քանի դարեր մեր մէջքը ծռինք,
Ուղիղ մէջքերս, մեր չար դուշմանին.
Ճակատնիս գետնին, չտեսանք երկինք,
Արցունք ու մոխիր մնաց մեզ բաժին...

Հայրենի հողը թրջինք արցունքով,
Մոխիր գլխներիս ցանեց թշնամին,
Մեր հպարտ մէջքը մի անգամ ծռինք,
Հարիւր տարիներ սողացինք գետին:

Հառաչանք, աղերս՝ ողջ իզուր անցան.
Գոռող յաղթողը չի նայում գետնին...
Վայ՝ նրանց, որոնք ոտքի տակ ընկան, —
Ով չի տրորում սողացող ճիճուին:

Գետերն են կարմիր, մեր հողերը սև,
Մեր արցունքը ծով բախտը վերացած,
Մեր ցաւերը խոր, խաւար մեր արև,
Հայրենիքը մեր երկունքով բռնւած...

Խաղաղ վաստակը կորաւ մեր երկրից,
Արեան, պայքարի ժամանակ հասաւ...
Թող այս գարունն էլ անցնի մեր գլխից, —
Գարունն ի՞նչ պէտք է, երբ ցաւն է անրաւ:

Արիւնոտ հողի կուրծքը սեւացած

VI

Մեղքը մերը չէ՛, անէ՞ծք զուշմանին,
 'նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:
 Է՛յ, Ի՞նչ էք կանգնել վզերդ ծռած,
 Հո՞ղը ձեզ տանի, կո՞յր հարեաններ...
 Էլ արդարութիւն, պատիւ չմնաց, —
 Խօսիրդ բերէք, կռնէք սուսերներ...
 Մեղքը մերը չէ՛, անէ՞ծք զուշմանին,
 'նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին...
 (Շարունակելի)

U h b f U S k n h p b h u

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՆ *ստացած է*

Թ. քաղաքից Ս.-ի մեջոցով (300 ու.) 795 Քրաևր, ռամբուրե
Դ.ից 10 Քր., ՈՍԿԱՆԱՊԱՏՈՅ 794 Քր. 80 սանթ., Տ. Աււտից
10 Քր., Անցորդից 70 Քր.: Գումար 1669 Քր. 80 սանթով:

ՈՍԿԵՅԱՆՔԻ ԿՕՄԻՏԷՆ՝

1901 յունիսի մուտքը՝ «Փայլակ» իւ. 10 դահեկան, Բորենի 19, Հրացանի եւ Ռոմ 20-ական դահեկան, «Աղանի» խումբ 5. 25, Ատրժանակ 5. 25 եւ Լուսին 6. 25, Զինուոր 20, «Արաբո» իւ. 70, Գլխարկ 54: ԱՐՇԱԿԱՆՆԻՆ՝ «Երկիրդած» եւ «Ազգասեր» իմքերէն 35, Նէր Ստորո-Աղբիւրէն 20, Զեփիւրէն 45 դահեկ.: Գումար 329. 75 դահեկան ողջ:

ՎՐԻՊԱՅ. — «Իրօշակ»-ի 1901 թ. N° 4-ի Ոսկէանքի ցանկին մէջ ըսւած է՝ «Մահ» 11 դէկ., աւելոր է ըլլայ՝ «Մահ» 60 դասեկան: Արաշանեան» իմքի անհատ ըսւած է, աւելոր է ըլլայ «Արաշանեան» իմքի անհատէն:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԿՕՄՊՈԶԻՏՈՐ

Յայն 40 դահեկան ողջ, Ազիզ 80, ՍԻժուխանը փրկութիւն է՝
 Ինչպիսիքս 20, Սրտոտ 10, Նըզո 16, ՍԻգրան՝ խ. 170. 6,
 Շալաւիք 40, Տոլակ 97. 5, Հիմանշան 8, Ս. Թ. 195, Մեղու
 202. 5, Մ. Զ. 50, Կարօ 38, Հայկ 30, Արզար 15, Սարհատ 44,
 Շմաւոն 30, Հրոյրապ 38, Դուրզէն 10, Սաֆօ 15 դէմ: Դուժար
 1159. 5 դահեկան ողջ:

ՎԻՇԱՊԻ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷՆ՝

„Ամստունի“ խ. 50 դահեկան, Հոսանք 2, Մօսին 3, Զարմայր 4, Հոսանք 3, Նւէր 67, „Կախաղալ“ խ., „Հոսանք“ խ., „Հիդրա“ խ., Պարտականութիւն 5-ական, „Կամբ“ խ. 15, „Արծիւ“ խ. 27, Հոսանք 20 դհ.: Գումար 211 դահեկան:

ՆԱԽԱՅԱՆԳԱՑԻ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷՆ՝

ԳԱՐԾԻՐ ԷԿՎԱԼԻՑ Կարմրաթշ. միջոցով 100 ռուբլի, Բ. «Կայծակ» խ. 20, «Սոչխան» խ., «Աղբիւր» խ., ՕԻԻ-ի «Առիծ» խ., ԶՐԱՇԵՆԻ «Գոգուռ» խ. 10-ական, մի քանտարիկեայի ճա- մար Սոչխան, Վիշնայ, Սիփան, Կայծակ 5-ական, Պ. Գալ 5, Պ. Գալ 1 ռ.: ԳԱՐՇԱՎԱՅՐԻ Նոր Գիւղից՝ «Յոճարական» խ. 1899 թւականից մնացած 18, Ժաղկածորից Ալեքսանյան 5 ռուբլի: ՆՈՐ ԷԿՎԱԼԻՑԻ Գոգուռ 3 ռուբլի, Կազա 2, Նոգրոս, Սի- փան, Պուլդար, Անքըրանից արին, Բերդ, Խաւրժիկ, Արծիւ, Կայ- ծակ, Լազիկ, Արծիշ, Տալաւարք, Պինկոլ մէկ-մէկ-ական: ԳԱՇՏ քաղաքի ճատրթն է 1900-1901 յունիս 30՝ Դաշտից 192 ռ. 40 կոպ., Կլորիկի խմբից 135 ռ., Ամաստնոցի խմբից 97, Ալ քա- �ղաքի խմբից 45, ՕՐ քաղաքից Նիքատուլթին 300, տեղական մետրիկ մէջ տաացւած է՝ Սամուէէնց 5 ռուբլի: Գումար 1000 ռուբլի՝ 40 կոպէկ:

ՎՐԻՊԱԿ. — N^o 5 „Դրօշակի“ մէջ սխալմամբ կրկնւած է
ԳԱՂԹԱՎԱՅՐԻ ԶԱՓՈՌԶ զԻՆԴԻԳ Մ. ՄԵԼ. 15 հուրէի:

ԱՄԵՐԻԿԱ՝

ՆԷՇՇՈՒԻԻ կօմիտէն՝ Յ. Կ. 2 դօլար 50 սէնթ, Պ. Կ. Կ. 2 դօլար, Խ. Ե., Զ. Պ., Մ. Պ., Վ. Խ., Պապ, Կ. Կ. Մէկմէկ-ականի դօլ., Տ. Տ., Ա. Թ., Հ. Տ., Գ. Մ., Խ. Պ., Տ. Զ., Կ. Կ., Ժ. Ա., Գ. Պ., Ա. Պ., Ա. Լ., Մորժ, Հորսէփի, Գ. Ա., Զ. Կ., Տ. Խ., Գ. Հ. 50-ականի սէնթ, Մ. Փ., Պ. Կ., Մ. Օ., Զ. Հ., Կ., Ճաւաթի, Պ. Ե., Ն. Ս., Պ. Պ., Մ. Ս. 25-ականի սէնթ: Գու-մար 21 դօլար 50 սէնթ: